Azg
armenian daily
6 ԱՊՐԻԼ 2002 ՇԱԲԱԹ 64 (2509)

Հրեաները «ցնցված են» Էջեւիթի հայտարարությունից

ԱՆԿԱՐԱ, 5 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իսրայելի գործողությունները Պաղեստինում Թուրքիայի վարչապետի կողմից «ցեղասպանություն» որակելը մեծ աղմուկ է բարձրացրել ԱՄՆ-ի հրեական համայնքում:

Վաշինգտոնի հրեական լոբբիի մի շարք հեղինակավոր գործիչներ հայտարարել են, որ ցավով են ընդունել Էջեւիթի նման բնորոշումները: Հրեական համայնքի մի հեղինակավոր առաջնորդ հայտարարել է, թե Իսրայելի գործողությունները մինչ այժմ նույնիսկ Իսրայելին բշնամի արաբական որեւէ երկրի կողմից չէին սացել «ցեղասպանություն» բնորոշումը, եւ իրենք խիստ խոցված են նման արտահայտություններ հասկանալ իրենց բարեկամ համարող Թուրքիայից լսելու կապակցությամբ: Հրեական համայնքի մի այլ ներկայացուցիչ այս կապակցությամբ ակնարկել է Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը եւ հայտնել, որ Թուրքիայի վարչապետի նման հայտարարությունները կարող են լրջորեն վնասել Իսրայելի եւ հրեական համայնքի հետ Թուրքիայի հարաբերություններին:

«Արդյունքով հաճախականություն տրամադրելը պետք է որպես նվաճում գնահատել»

Ասաց նախնագահ Ռոբերտ Քոչարյանը «Զվարթնոցում»

Երեկ ավարտվեց նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Տաջիկստան եւ Կիրգիզիա: Հայաստան ժամանելով նախագահը «Զվարթնոց» օդանավակայանում կարճատեւ հանդիպում ունեցավ լրագրողների հետ: Նրան ուղղված հարցերի գերակշիռ մասը վերաբերում էր «Ա1+»-ի հեռուստաընկերության եթերից զրկվելուն եւ դրա շուրջ ծավալված իրադարձություններին:

– Ինչպե՞ս եք գնահատում «Ա1+»-ի շուրջ ծավալվող իրադարձությունները եւ այն փաստը, որ հանրային հեռուստատեսությունը նրան եթեր առաջարկեց, բայց նա հրաժարվեց:

– Քանի որ երկրից բացակա էի, դժվարանում եմ որեւէ գնահատական տալ: Տվյալ դեպքում հանրային եթերը կնշանակեր ոչ միայն եթեր ամբողջ Հայաստանի տարածքում, այլեւ Ավստրալիայից մինչեւ ԱՄՆ: Այսինքն աշխարհագրական առումով շատ ավելի լայն հնարավորություն կտար: Քանի որ ես խոստացել եմ հանդիպել «Ա1+»-ի կոլեկտիվի հետ, կհանդիպենք, կտեսնենք:

– Ի՞նչ հարցեր են քննարկվելու (հարցը «Ա1+»-ի թղթակցինն էր):

– Ես դա ձեզ պետք է հարցնեմ: Ինձ համար պարզ է, որ հարցը պետք է դիտարկվի իրավական հարթության մեջ: Ես չգիտեմ, թե ինչպիսի խոսակցություն կլինի; ինչպիսի ակնկալիքներ կան:

– Այդ դեպքում ինչո՞ւ եք հանդիպում:

Տես էջ 2

ԱՍՈՒԼԻՍ

Հայաստանն ու Վրաստանը նախատեսում են որակապես նոր ռազմական համագործակցություն

Երեւանում էր Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետը

«Սա պատմական պահ է», երեկ նշեց Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Զոնի Փիրցխալաիշվիլին՝ իր երեւան կատարած եռօրյա այցի ավարտին երկու համատեղ արձանագրություն ստորագրելուց հետո: Սրանից մեկն ամփոփում էր պրն Փիրցխալաիշվիլու աշխատանքային այցի արդյունքները: Մյուսը վերաբերում էր Հայաստանի եւ Վրաստանի պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչներից՝ այս այցի շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբերի գործունեությանը՝ հետագա համագործակցության ուղղությունները նախանշելու առումով:

Պահը պատմական էր այնքանով, որ, ըստ ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Միխայել Հարությունյանի, վերջին տասը տարիներին հայ-վրացական հարաբերություններում ռազմական ոլորտի համագործակցությունը բացթողումներ է ունեցել: Այնպես որ, վերոհիշյալ աշխատանքային խմբերը պիտի մանրամասն ուսումնասիրեն փոխգործակցության բոլոր հնարավորությունները:

Տես էջ 2

Ժակ Շիրակը պարզաբանումներ է տալիս ՌԱԿ-ին

Այս ամիս Ֆրանսիայում կայանալիք նախագահական ընտրությունների շեմին ֆրանսահայերի համակարգիչ հանձնախումբը (նախկին «Ապրիլ 24 կոմիտե») հարցեր էր ուղղել երկու գլխավոր թեկնածուներին՝ ներկայիս նախագահ Ժակ Շիրակին եւ վարչապետ Լիոնել Ժոսպենին: ՌԱԿ Ֆրանսիայի շրջանային վարչության ատենապետ Ժան Վարուժան Սիրապյանն օրերս Ժակ Շիրակից հավելյալ պարզաբանումներ խնդրեց Հայոց ցեղասպանության ժխտման փորձերի եւ Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման առնչությամբ:

Իր պատասխան նամակում նախագահ Ժակ Շիրակը ՌԱԿ ատենապետին գրում է, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ Ֆրանսիայի խորհրդարանն արդեն համապատասխան օրենք է ընդունել 2001 թ. հունվարի 18-ին: Դա հիշողության պարտք է եւ ցույց է տալիս, որ Ցեղասպանության փաստը չի կարող վիճարկվել: «Խոսքն անցյալ դարի ամենաահավոր ողբերգություններից մեկի մասին է, եւ պատմության վերաշարադրումն անընդունելի է: Ուստի մեր իրական նպատակը՝ հաշտեցման եւ խաղաղության նպատակը կարելի է իրականացնել միայն փաստերի վրա հիմնվելով», մասնավորապես գրում է Շիրակը: Նրա կարծիքով, Հայ դատին նպաստելու առավել մարդասիրական եւ արդյունավետ եղանակներն են կրթությունն ու ճանաչողությունը: Այդ նպատակով ինքն առաջարկել է հիմնել հայ մշակույթի, պատմության եւ քաղաքակրթության ինստիտուտ, որը կարժեւորի Ֆրանսիային եւ աշխարհին հայերի բերած նպաստը: Նախագահ Ժիրակը նամակում ցանկություն է հայտնում, որ տվյալ հարցում Ֆրանսիայի օրինակին հետեւեն Եվրոպան եւ ողջ աշխարհը:

Ինչ վերաբերում է Հայաստանի շրջափակմանը, Ժակ Շիրակը դա մտահոգության լուրջ առարկա է համարում Եվրոպայի համար: Նրա կարծիքով, այդ իրավիճակը խոչընդոտում է ամբողջ տարածաշրջանի զարգացմանը: Շեշտելով, որ վերջին տարիներին ինքը ելիսեյան պալատում երկու անգամ կազմակերպել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումներ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծում գտնելու նպատակով, Շիրակն ընդգծում է, որ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը, իր կարծիքով, կհանգեցնի հայ-թուրքական հարաբերությունների բարելավման: Ժակ Շիրակը հավաստիացնում է, որ ինքը կշարունակի տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերը:

Պ. Ք.

Հայաստանի պատվիրակությունը Սամցխե-Ջավախքում

ԹԲԻԼԻՍԻ, 5 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում են հանրապետության վարչապետի գլխավոր խորհրդական Ստեփան Մարգարյանը եւ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Առուշան Հակոբյանը, ուրբաթ օրը երկօրյա այցով ժամանել է Վրաստանի Սամցխե-Ջավախքի տարածաշրջան: Սամցխե-Ջավախքի երկրամասային վարչակազմի մամուլի ծառայությունում Փրայմ նյուսին հայտնել են, որ այցը ճանաչողական է, եւ հայաստանցի հյուրերն արդեն հանդիպում են անցկացրել տարածաշրջանի նահանգապետ Թեյմուրազ Մոսիաշվիլու հետ, ընդ որում բանակցությունները մասամբ ընթացել են դռնփակ: Հայկական պատվիրակության անդամները, որոնց ուղեկցում է Վրաստանում Հայաստանի դեսպան Գեորգի Խուրտեւը, ուրբաթ օրվա երկրորդ կեսին Ախալցխայում հանդիպել են հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Իսրայելցի զինվորները կրակում են լրագրողների վրա

Շուրջ 25 օտարերկրացի լրագրողներ երեկ Ռամալլայում հանկարծակի ենթարկվեցին իսրայելցի զինվորների կրակին եւ ստիպվեցին հեռանալ Պաղեստինի առաջնորդ Յասեր Արաֆաթի կենտրոնականից, որտեղ այդ պահին վերջինս ընդունում էր Մ. Նահանգների հատուկ բանագնաց, գեներալ Անտոնի Զինիին: Բարեբախտաբար, արձակված գնդակները պլաստիկից էին, այսինքն՝ սարսափ պատճառելու համար կրակված: Ըստ տեղեկությունների, գեներալ Զինին դժվար խոսակցություն է ունեցել Արաֆաթի հետ: Վերջինս պահանջել է ստիպել իսրայելյան զորքերն անհապաղ հեռացնելու գրավյալ տարածքներից, մինչ Զինին հստակ հավաստիացում է պահանջել հակաիսրայելյան գործողություններից զերծ մնալու վերաբերյալ:

Մյուս կողմից, երեկ շարունակվեց Բեթղեհեմի Սբ. Ծննդյան տաճարի պաշարումը: Ինչպես նախապես ասվել է, այնտեղ ապաստանել են շուրջ 250 պաղեստինցիներ, պաշարված վիճակում են նաեւ հայ, լատին եւ ղպտի եկեղեցականներ:

Հակառակ նախորդ օրը զորքերը հետ քաշելու մասին նախագահ Բուշի կոչին, Իսրայելը երեկ առավել ծավալվեց պաղեստինյան տարածքներում՝ հարձակվելով Նաբլուսը եւ Ջենին քաղաքների վրա, որտեղ կատաղի մարտերը շարունակվում են: Դիտորդների կարծիքով, մինչեւ առաջիկա շաբաթ Մ. Նահանգների պետքարտուղար Քոլին Փաուելի տարածաշրջան ժամանելն, Իսրայելը ցանկանում է ավարտել պաղեստինյան տարածքները սանրելու գործը:

ՏԵՂԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՀՈՒԱԿ Հանրապետական վարչությունում

Ապրիլի 4-ին տեղի է ունեցել Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության հերթական նիստը: Վարչությունը հաստատել է կլոր սեղանի թեմաները, որոնում է կայացվել առաջին կլոր սեղանը գումարել ապրիլի 20-ին, ժամը 12:00-ին, Թեթեյան կենտրոնում, որի ընթացքում կքննարկվի Հայաստանի բանկային տնտեսության արդի վիճակը:

Վարչությունն անդրադարձել է կուսակցության նոր կառույցների ստեղծման խնդրին: Արձանագրվել է, որ ՀՈԱԿ ակումբների թիվը մոտենում է 100-ին, իսկ մարտի 27-ին Վանաձորում եւ մարտի 29-ին Գյումրիում տեղի են ունեցել կուսակցության Լոռու եւ Շիրակի շրջանային առաջին պատգամավորական ժողովները, որոնք ընտրել են վարչություններ: Առաջիկա շաբաթ ՀՈԱԿ նոր ակումբներ են բացվելու Սյունիքի մարզում, Ստեփանավանի տարածաշրջանում, ինչպես նաեւ Կոտայքի մարզում: Երեւան քաղաքի երեք համայնքներում կսկսեն գործել ՀՈԱԿ գրասենյակներ:

Վարչությունը նշեց, որ կառուցվածքային նոր սոռաբաժանումների անջատումը վկայում է կազմակերպական գործունեության բարելավման մասին, սակայն քարոզչական գործունեության ծավալը չի համապատասխանում կուսակցական զարգացման նոր որակին: Որոշումներ ընդունվեցին քարոզչական աշխատանքի բարելավման ուղղությամբ:

Վարչությունը քննարկեց նաեւ Հայաստանի Հանրապետության ներքին եւ արտաքին քաղաքականությանն առնչվող մի շարք հարցեր:

Էներգիայի սակագներն առայժմ չեն փոխվի

Հավաստիացնում է էներգետիկայի հանձնաժողովի նախագահը

Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ Վարդան Սովսիսյանի հանդիպումը լրագրողների հետ հիմնականում նվիրված էր սոցիալապես անապահով խավի համար երկսակագնային հաշվիչների տեղադրման մրցույթին: Խնդիրն այն է, որ հանձնաժողովը, նախկին որոշման փոխարեն, որտեղ նպատակահարմար է համարվել վեց սակագին ունեցող հաշվիչների տեղադրումը, վերջերս ընդունված որոշմամբ նախընտրել է երկսակագնայինը: Դա Վարդան Սովսիսյանը բացատրեց նրանով, որ բազմասակագնային բաժանումը տնտեսապես ու սոցիալապես արդարացված չէ, եւ անապահով խավերը չեն կարող դրանից շահել: Այդ պատճառով էլ հանձնաժողովը փոխել է իր երկու տարի առաջ ունեցած դիրքորոշումը: Թե ի՞նչ կարժենան հաշվիչները՝ հարցին հանձնաժողովի նախագահը պատասխանեց, որ դա կորոշվի մրցույթում, իսկ դրանց գները տարբեր են 20-100 դոլար: Ինչ վերաբերում է ներկայումս տեղական արտադրողի «Կոնցեռն էներգիայի» բազմասակագնային հաշվիչներին, ապա դրանց մոտավոր արժեքը 50 դոլար է: Անցած 2 տարվա ընթացքում արդեն տեղադրվել են 15 հազար այդպիսի հաշվիչ, այդ թվում 10 հազարը՝ բնակիչների կողմից: Սակայն այդ թիվը շատ փոքր է ակնկալվածի (90-100 հազար) համեմատ:

Վարդան Սովսիսյանը հայտնեց, որ վերոնշյալ մրցույթն իրականացնելու է էներգետիկայի նախարարությունը, իսկ համապատասխան գումարը տրամադրել է Ճապոնիան: Նրա կարծիքով, առավել նպատակահարմար է եղած հաշվիչներ գնելն ինչպես սպառողների շահերի տեսանկյունից, այնպես էլ վարկային գումարները խնայելու եւ խնայված միջոցները համակարգի մյուս խնդիրներին ուղղելու առումով:

Անդրադառնալով ՀԱԷԿ-ը 2004 թ. փակելու Եվրամիության պահանջին եւ փոխարինող հզորություններ ստեղծելու հնարավորություններին, Վարդան Սովսիսյանը կարծիք հայտնեց, որ մինչեւ վերջիններս չստեղծվեն, անհնար է ատոմակայանի փակումը: Իսկ ԱԷԿ-ի շահագործման առավելագույն ժամկետը մինչեւ 2016 թ. է: Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահը հիշատակեց 100 մլն եվրո հատկացնելու Եվրամիության պատրաստակամությունը, որը պետք է ուղղվի այլընտրանքային հզորությունների ստեղծմանը, սակայն նշեց, որ այս հարցի շուրջ դեռեւս բանակցություններ են ընթանում: Բացի այդ, անգամ այդ գումարի նպատակային օգտագործման դեպքում հնարավոր չէ ամբողջությամբ լրացնել ԱԷԿ-ի փակմամբ առաջացող պակասը:

Պատասխանելով բնակչությանն առավել հուզող հարցերից մեկին՝ էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման վերաբերյալ, Վարդան Սովսիսյանն ասաց, որ այս տարի դա տեղի չի ունենա, իսկ եկող տարի «հավանաբար տեղի չի ունենա»:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանն ու Վրաստանը նախատեսում են որակապես նոր ռազմական համագործակցություն

Սկիզբը էջ 1

Նախատեսվում է նախանշվող ուղղություններն ամրագրել աշխատանքային փաստաթղթում եւ ներկայացնել երկու երկրների պատգամավորների նախարարներին: Վրաստանի պատգամավորների նախարարի մոտ ժամանակներս մեր երկիր սպասվող պատգամավորական այցի ժամանակ:

«Այս համագործակցությունն ուղղված չի լինելու որեւէ երրորդ պետության դեմ: Մենք նպատակ ունենք նպաստել մեր երկու երկրների պատգամավորական համակարգերի զարգացմանը: Մենք հարեւաններ ենք, իսկ հարեւաններին չենք ընտրում: Վրաստանում հայեր են ապրում: Վրաստանի տարածքով են անցնում մեզ աշխարհի հետ կապող գրեթե բոլոր ուղիները: Իհարկե, մեր շահերից է բխում Վրաստանի կայունությունը», ընդգծեց Միխայել Հարությունյանը:

Լրագրողներին, այնուամենայնիվ, հայտնեցին, թե Հայաստանը, լինելով Ռուսաստանի ռազմավարական դաշնակից, ինչպե՞ս է պատկերացնում ռազմական համագործակցության խորացումը դեպի ՆԱՏՕ ձգտող Վրաստանի հետ: Պրն Հարությունյանը, պարզաբանելով, նախ եւս մեկ անգամ շեշտեց, թե այսօր Հայաստանը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է ու այդպես լինելու է հեռագայում էլ: «Բայց մենք կամենում ենք լավ հարաբերություններ ունենալ նաեւ այլ պետությունների հետ: Հակապես, կրկնում եմ, մեր հարեւանի: Իսկ Վրաստանն էլ, իր հերթին, իրավունք ունի որոշելու, թե որ երկրի հետ է զարգացնելու ռազմավարական-գործընկերային հարաբերությունները»: Փիրցխալաիշվիլին նշեց, «ԱՄՆ-ի հետ Վրաստանի համագործակցությունը չի մտահոգում Հայաստանին: Բայց, չգիտես ինչու, անհանգստացնում է Ռուսաստանին: Մեր երկրում եղած ռուսական ռազմակայանները դուրս բերվելուց հետո չեն փոխարինվել նորերով: Դրանք թողնվել են տվյալ բնակավայրերի քաղաքացիական իշխանությունների հայեցողությանը: Մեկի տեղում այսօր հիվանդանոց է գործում»:

Իսկ ԱՄՆ-ի հետ Վրաստանի ռազմական համագործակցությունը մեկնաբանելով՝ վրացական զինված ուժերի գլխավոր շտաբի պետը նշեց, թե իրենք նախաձեռնել են բանակի վերածելավորում՝ վերջինս պրոֆեսիոնալ դարձնելու հեռանկարով: Այդ նպատակով արդեն տարիներ շարունակ վրացի սպաները վերապատրաստվում են հենց երկրում եւ արտասահմանում: «Ու ԱՄՆ-ի հետ համագործակցությունն էլ նոր չէ, ինչպես աղմուկ բարձրացվեց: Վաղուց արդեն իրականացրել ենք ուղղաթիռային համատեղ դասընթացներ»:

Փիրցխալաիշվիլին տեղեկացրեց, որ մոտ ժամանակներս ամերիկյան եւս 150 զինվորական մասնագետներ կժամանեն Վրաստան զինվորական պատրաստության հատուկ դասընթացներ անցկացնելու: «Իսկ Ռուսաստանի հետ, որպես մեր հարեւանի, հիանալի հարաբերություններ ունենք»:

Վրացի գեներալը հայ ժողովրդին էլ խաղաղություն մաղթեց ու հավաստեց, թե դրա համար իրենք գործադրում են բոլոր ջանքերը:

Լ. Գ.

Արդարություն գտնելու ակնկալիքով

Պատգամավոր Մելիք Գասպարյանի եւ «Արմենյն թրեյդրզ» ՍՊԸ-ի նախագահ Արթուր Գյուրջինյանի միջեւ առկա դատական վեճին «Ազգն» արդեն անդրադարձել է: Սակայն կողմերից մեկը, տվյալ դեպքում Արթուր Գյուրջինյանը, վերոհիշյալ խմբագրություն այցելեց հասարակությանն իրազեկ պահելու համար իր նկատմամբ անարդար վճիռ կայացրած դատական ատյանի կողմից մի շարք օրենքների խախտման փաստերի մասին:

Անդրադառնալով վեճին, Արթուր Գյուրջինյանն ասաց, որ Մելիք Գասպարյանը նախ խլել է իր ղեկավարած կազմակերպության կիսավարս շինությունը, ապա պահանջել եւ դատարանով ստացել է 325 հազ. դոլար վնասի հատուցում խլված շենքի պատվիրատուի («Արմենյն թրեյդրզի») կողմից չկառուցած լինելու համար: Մինչդեռ «Արմենյն թրեյդրզի» ղեկավարը նշում է, որ որպես պատվիրատու ինքը կատարել է իր պարտավորությունները, իսկ Մելիք Գասպարյանը, ընդհակառակը, չի կատարել: Վերջինիս օգտին վճիռ կայացնելով՝ դատարանը, ըստ Արթուր Գյուրջինյանի, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48, 49, 51, 53 հոդվածների, չի պահանջել հիմնավորող ապացույցներ ներկայացնել, ինչպես նաեւ խախտել է գործող դատավարական եւ նյութական իրավունքի նորմերը, սխալ է մեկնաբանել վնաս հասկացությունը եւ արդյունքում կիրառել է այն օրենքները, որոնք տվյալ դեպքում չպետք է կիրառվեին եւ ընդհակառակը՝ չի կիրառել այն օրենքները, որոնք պետք է կիրառվեին: Այս ամենը Արթուր Գյուրջինյանի մեջ հարց է առաջացնում, թե ո՞րն է Մելիք Գասպարյանի «դատական «հաղթանակների» գաղտնիքը»՝ պատգամավորական մանդա՞տը, նրա տնտեսական գործունեությամբ ստացվող «տասնյակ հազարավոր դոլարների եկամո՞ւտը», թե՞ նորանշանակ դատավորների գիտելիքների պակասը:

Մեր կողմից նշենք, որ պատրաստ ենք ներկայացնելու նաեւ Մելիք Գասպարյանի դիրքորոշումը:

Ա. Մ.

ՎԵՐՑՆԱԳՐԱՅԻՆ ԼԵԶՎՈՎ

Պահանջվում է շրջանառությունից հանել «ԶԼ մասին» օրենքի նախագիծը

ԵՐԵՎԱՆ, 5 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Մենք իշխանություններին ժամանակ ենք տալիս մինչեւ մայիսի 3-ը՝ Մամուլի ազատության միջազգային օրը, որպեսզի նրանք հանդես գան «Զանգվածային լրատվության մասին» օրենքի նախագիծը շրջանառությունից հանելու մասին հայտարարությամբ»,- ապրիլի 5-ին Մամուլի ազգային ակումբում (ՄԱԱ) կայացած ասուլիսում հայտարարեց ակումբի նախագահ Նարինե Մկրտչյանը: Ըստ նրա, Հայաստանում «տեղեկատվական միջոցների ջարդ է գնում», եւ եթե անհրաժեշտ միջոցներ չձեռնարկվեն, «կունենանք այնպիսի մամուլ, ինչպիսին ունեինք 70 տարի շարունակ»:

Խոսքի ազատությունն ու մարդու իրավունքները, ընդգծեց Մկրտչյանը, 21-րդ դարում առաջնային են ամբողջ աշխարհում, սակայն «մեր երկրում փորձում են այն բացառել»: ՄԱԱ նախագահը միաժամանակ տեղեկացրեց, որ իրենց պայքարն առաջ տանելու համար դիմելու են Հայաստանում հավատարմագրված դեսպաններին, միջազգային կազմակերպություններին եւ լրագրողական ընկերակցություններին:

«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանի խոսքերով, իրենց նպատակը «կառավարության կամ որեւէ անձի դեմ տգայական հաղթանակ տանելը չէ», այլ Հայաստանում խոսքի ազատության պաշտպանությանը եւ հաստատմանն ուղղված համար պայքարը: «Պաշտոնյաներն արդեն գրավել են երեք իշխանություն եւ ցանկանում են գրավել չորրորդը եւս, սակայն դա նրանց չի հաջողվի»,- հայտարարեց Փաշինյանը, ավելացնելով, որ ցանկալի չէ իրավիճակի բարդացումը այնման, որպեսզի «սխրված լինենք անհնազանդություն դրսեւորել եւ չենթարկվել այս խորհրդարանին եւ նրա ընդունած օրենքներին»:

ՄԱԱ անդամ, «Ա1+» հեռուստաընկերության քաղաքական մեկնաբան Վարդան Վարդանյանը հայտնեց, որ ակումբը սահմանել է «Մամուլի բարեկամ» եւ «Մամուլի թշնամի» մրցանակներ, որոնք մայիսի 3-ին կտրվեն իրենց արժանի տերերին: Ըստ Վարդանյանի, ներկայիս իշխանությունները հոգեվարքի մեջ են, եւ խոսքի ազատությունը, ժողովրդավարական ազատ մամուլը շուտով կհաղթանակեն:

Լիբանանի Լրագրողների արհմիության անդամ Գեւորգ Յազըճյանի համոզմամբ, «մամուլի ազատությունն ու ազատություններն ընդհանրապես պայմանավորված են դրանք ունենալու եւ պահպանելու համար ամեն զոհողության պատրաստ մարդկանց անհողդողդ կամքի առկայությամբ»: 1863թ., նշեց նա, երբ Պոլսի պատրիարքարանը առաջին անգամ փորձեց սահմանափակել հայկական պարբերականների խոսքի ազատությունը, «Մեղու» պարբերականի հիմնադիր-խմբագիր Հարություն Սվաճյանը հայտարարեց. «Մենք ավելի կսիրենք մեռնիլ ազատության հետ, քան թե անոր մահը տեսնել»: Ըստ Յազըճյանի, արժեր, որ այս արտահայտությունը դառնար յուրաքանչյուր հայ լրագրողի եւ ՀՀ քաղաքացու նշանաբանը:

«Մրցույթով հաճախականություն տրամադրելը պետք է որպես նվաճում գնահատել»

Սկիզբը էջ 1

– Կարող եմ եւ չհանդիպել: Առաջարկն արվել է եւ ոչինչ չի պարտադրվում: Ինձ համար ակնհայտ է, որ առաջին անգամ Հայաստանում, համաձայն օրենքի, մրցույթով հաճախականություն բաժանելը պետք է որպես նվաճում գնահատել: Ցավոք, առաջին փուլում 37-րդ «Ա1+»-ի զբաղեցրած ալիքը կար, բայց երբեք ընդհանուր համատեքստում մասնավոր մեկ խնդիրը չի կարելի գերադասել ընդհանուրից: Պետք էր ավելի լավ պատրաստվել:

– Իսկ «Նոյյան տապանը»:

– Չեմ կարծում, թե դա կայացած, ծրագրերով ալիք էր: Իսկ «Ա1+»-ը պետք է երեւի մտածի, թե ապագայում ինչ պետք է անի, հաջորդ մրցույթներին կմասնակցի, թե՞ ոչ: Սպասենք նաեւ դատարանի որոշմանը:

– Իսկ «Ա1+»-ի կոլեկտիվին կասե՞ք, որ տեղի ունեցածը նվաճում էր:

– Ոչ թե տեղի ունեցածը, այլ երեւույթը՝ մրցույթով հաճախականություն տրամադրելը: Նույնիսկ «Ա1+»-ի վերաբերյալ ես մի փոքր չարաշահում թույլ տվեցի, մինչ հանձնաժողովի որոշումն ասելով, որ կցանկանայի «Ա1+»-ը եթերում տեսնել: Դա կարելի է գնահատել որպես ճնշում հանձնաժողովի անդամների վրա, ինչի պատճառով մրցույթի մյուս մասնակիցները ինձ կարող էին մեղադրել: Երեւի դրա էլ պետք է խոստովանեմ, որ մրցույթին մի աչքով եմ նայել: Չեմ սպասել, որ կլինեն լուրջ մրցակիցներ այդ ալիքի համար եւ այդպես է ստացվել: Եթե նախորդ շատ ավելի լուրջ պատրաստված լինեիք, երեւի այսպես չէր լինի:

– Տեղյա՞կ եք ի պաշտպանություն «Ա1+»-ի եւ խոսքի ազատության վիճակի կուսակցությունների հրավիրած միտինգին:

– Չեմ կարծում, թե «Ա1+»-ի ճակատագիրը կուսակցությունների մեծ մասին շատ է հուզում: Ինչ վերաբերում է խոսքի ազատությանը, ապա այդ տեսանկյունից դիտարկելու դեպքում կարող ենք ասել, որ Հայաստանում չկա պետական հեռուստաալիք, կա մեկ հանրային, իսկ մնացած բոլորը մասնավոր են: Խոսքի ազատության ինչ սահմանափակումների մասին կարող է խոսք լինել:

– Բացի «Ա1+»-ից, ուրիշ ո՞ր ալիքով եք տեսել ընդդիմադիր գործիչների ելույթները:

– Օրինակ, հանրային հեռուստատեսությամբ «Խորհրդարանի ժամի» ժամանակ ես շատ «բարյացակամ», այսպես ասած, արտահայտություններ իմ հասցեին լսում եմ: Սակայն կարեւորը մասնավորներն են, որոնց վրա պետությունը օրենքով ազդելու լծակներ չունի: Այս մրցույթը եւ օրենքները հնարավորություն կտան նրանց շատ ազատ եւ անկաշկանդ արտահայտվել: Այդ կտրվածքով փորձեք գնահատել:

– Որոշ քաղաքական գործիչներ ասում են, որ օրենքն է անկատար:

– Չեմ կարծում, թե մենք ընդհանրապես կատարյալ օրենքներ ունենք: Այս օրենքը համապատասխանում է եվրոպական չափանիշներին: Եթե կան թերություններ, ապա ես օրենսդրորեն նախաձեռնության իրավունք չունեմ, իսկ պատգամավորները, կուսակցությունները թող հանդես գան համապատասխան նախաձեռնությամբ:

Ռոբերտ Քոչարյանն անդրադարձավ նաեւ արտգործնախարար Վարդան Օսկանյանի նախօրեին արած հայտարարությանը նշելով, որ արտաքին քաղաքականության որեւէ առանձնահատուկ փոփոխություններ չեն եղել:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ՀՍ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տոյգիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Լաբաթիկ

Հայ-կիրգիզական տնտեսական հարաբերություններում հեռանկարային է համարվում ոսկերչության ոլորտը

Ասկար Ակաեւը տպավորված էր 2001 թ. Հայաստանի տնտեսական ցուցանիշներով

Հայաստանի եւ Կիրգիզիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թ., փոխհարաբերությունները բնականոն հունի մեջ են եւ զարգացման որոշակի ներուժ ունեն հատկապես տնտեսական ոլորտում: Քաղաքական, ռազմատեխնիկական կապերը բավականաչափ բարձր մակարդակի վրա են. բավական է նշել ԱՊՀ-ն եւ Հավաքական անվտանգության պայմանագիրը (ՀԱՊ), որոնց անդամ են Հայաստանը եւ Կիրգիզիան: Անցնող տասը տարիներին Կիրգիզիայի անփոփոխ ղեկավար Ասկար Ակաեւը ԱՊՀ-ի եւ ՀԱՊ-ի շրջանակներում բազմիցս հանդիպել է Հայաստանի ե՛ւ առաջին, ե՛ւ գործող նախագահներին: 1997 թ. Ակաեւը պաշտոնական այցով եղել է Երեւանում:

Ապրիլի 4-5-ը Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի Բիշքեկ կատարած երկօրյա այցն ի՞նչ խթան կարող է տալ հայ-կիրգիզական տնտեսական հարաբերություններին, որոնք գրեթե զրոյական մակարդակի վրա են:

Նախագահ Ակաեւը հայ-կիրգիզական տնտեսական հարաբերություններում մասնավորապես կարեւորում է ոսկերչության ոլորտը: Կիրգիզիայում արդյունահանում են ոսկի, թանկարժեք քարեր, սակայն ոսկերչության արվեստին կիրգիզ ժողովուրդն այնքան էլ լավ չի տիրապետում: Հայաստանը, ինչպես նշում է Ակաեւը, ոսկերչության ոլորտում ԽՍՀՄ «օրենսդիրներից» է, իսկ հայ ոսկերիչների ձեռքի գործն այսօր գնահատվում է եւ պահանջարկ ունի զարգացած երկրներում: «Ինձ համար դժվար է նշել ԱՊՀ մեկ այլ երկիր, որտեղ դինամիկ կառուցվածքային փոփոխություններ են տեղի ունենում տնտեսության մեջ», տպավորված 2001 թ. Հայաստանի տնտեսական ցուցանիշներով, ասաց Ակաեւը, միաժամանակ նշելով, որ Հայաստանի եւ Կիրգիզիայի առեւտրատնտեսական ներկա ցուցանիշները չեն համապատասխանում առկա պոտենցիալին, համոզմունք հայտնեց, որ ստորագրվելիք փաստաթղթերը կփոխեն իրավիճակը:

Ինչպես նշեցինք, հայ-կիրգիզական առեւտրատնտեսական շրջանառությունը զրոյականից մի փոքր է բարձր. դրա պատճառներից մեկը Հայաստանի եւ Կիրգիզիայի աշխարհագրական դիրքն է, երկու երկրների միջեւ առեւտրական ուղիների բացակայությունը: Ապրիլին 4-ին Հայաստանի եւ Կիրգիզիայի միջեւ ստորագրված չորս պայմանագրերից երկուսը տնտեսական ոլորտից են՝ կառավարությունների միջեւ երկակի հարկումից խուսափելու եւ օդային հաղորդակցությունների հաստատման համաձայնագրերը:

Բացի այդ, ինչպես նշում է ՀՀ նախագահ Քոչարյանը, միջինասիական երկաթգծի գործարկումով, ինչի շնորհիվ Ալմաթի-Թեհրան գնացքն անցնում է միջինասիական բոլոր հանրապետություններով, հայ-կիրգիզական հարաբերություններում կարելի է ակնկալել առեւտրատնտեսական գործակցություն՝ Իրանի տարածով: Այս տարի կազմավորվել է հայ-կիրգիզական միջկառավարական հանձնաժողով, ինչը եւս կարեւոր դեր կարող է խաղալ առեւտրատնտեսական հարաբերությունները տեղից շարժելու առումով:

Հայկական կողմը եւս շահագրգռված է Կիրգիզիայի հետ համագործակցելու ոսկերչության, ադամանդագործության, բարձր տեխնոլոգիաների ոլորտում: Երկկողմ բանակցությունների ավարտին կիրգիզ պատգամավորների ելույթներից տպավորություն ստեղծվեց, թե Կիրգիզիան շահագրգռված է Հայաստանի հետ ստեղծել համատեղ ոսկերչական ձեռնարկություններ: Չի բացառվում նաեւ գունավոր եւ հազվագյուտ մետաղների տեխնոլոգիական մշակման, ինչպես նաեւ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման համատեղ ձեռնարկությունների ստեղծումը:

Երկօրյա պաշտոնական այցի վերջին օրը Հայաստանի նախագահն իր կեցավայրում ընդունեց եւ կես ժամանոց զրույց ունեցավ Կիրգիզիայի վարչապետ Կ. Բակիեւի հետ, ապա փոխվարչապետ, արդյունաբերության եւ արտաքին առեւտրի նախարար Ա. Սուլայմանկուլովի ուղեկցությամբ եղավ «Բիշքեկ» ազատ տնտեսական գոտում, որտեղ կատարեց թուրքական պլաստիկ շշերի արտադրության գործարան, ամերիկա-չինական կարի ֆաբրիկա, կահույքի արտադրության կիրգիզա-կորեական համատեղ եւ իրանական օճառի արտադրության փոքր ձեռնարկություններ:

Երեւան վերադառնալուց առաջ Հայաստանի պաշտոնական պատվիրակությունն այցելեց «Ալա-Արչա» բուսաբանական այգի, ծաղեց կիրգիզական ավանդական յուրտերում:

Հայերը Կիրգիզիայում

Հայաստանի նախագահի պաշտոնական այցերի բաղկացուցիչ մաս է կազմում տվյալ պետությունում բնակվող հայերի հետ հանդիպումը: Բացառություն չկազմեց նաեւ Կիրգիզիան: Երկրի պաշտոնական տվյալներով՝ Կիրգիզիայում, գլխավորապես մայրաքաղաք Բիշքեկում, ապրում է 1364 հայ, ոչ պաշտոնական տվյալներով՝ ավելի քան 3 հազար: Բիշքեկում գրանցված է մեկ համայնքային կազմակերպություն: Հայերը հիմնականում զբաղվում են փոքր ձեռներեցությամբ, ուսուցիչներ, դասախոսներ, բժիշկներ, արհեստավորներ են: Կիրգիզիայում սփյուռքը ձեւավորվել է անցյալ դարի 20-ական թթ. Ուզբեկստանից, Թուրքմենիայից, Ղազախստանից տեղափոխված հայերից:

Բիշքեկի համայնքն ունի ազգային մշակութային կենտրոն, կիրակնօրյա դպրոց, որտեղ հայերեն են սովորում 20 հայ երեխաներ: Զգացվում է դասագրքերի եւ հայատառ գրականության պակաս: Հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում Ռոբերտ Քոչարյանն առաջարկեց ներկայացնել անհրաժեշտ գրականության ցանկը եւ խոստացավ աջակցել:

Կիրգիզիայի հայերը նախագահ Քոչարյանին հարցնում էին հայրենիքսփյուռք կապերից, արտագաղթից, Լեռնային Ղարաբաղից, Հայաստանի ներքին իրավիճակից, տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխություններից: Արտահայտվելով ընդդիմության մասին՝ Քոչարյանն ասաց, որ ընդդիմությունը չունի քաղաքական կուլտուրա: Նախագահը նշեց, թե ե՛ւ իշխանությունները, ե՛ւ ընդդիմությունը ժողովրդավարություն սովորելու կարիք ունեն, սակայն ժողովրդավարություն ավելի շուտ պետք է սովորեցնել ընդդիմությանը:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Բիշքեկ-Երեւան

ԶԵԿՈՒՅՑ

Խաթարված «նվաճումներ»

Մարդու իրավունքների ոլորտում

ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովը հրապարակել է 2001 թ. տարեկան իր զեկույցը Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ: Այս զեկույցում հանձնաժողովն, ամփոփելով իր գործունեության շուրջ քառամյա ուղին, անդրադարձել է նաեւ նախորդ զեկույցներում նշված հիմնահարցերի նկատմամբ պետության դրսեւորած վերաբերմունքին եւ ձեռք բերված արդյունքներին:

Զեկույցն անդրադառնում է հաստանդամների, հայոց լեզվի, հեռախոսակապի, առողջապահության, իրավապահ մարմինների, սոցիալական վիճակի, գործազրկության, փախստականների, պետության կառավարմանը քաղաքացիների մասնակցության եւ այլ տարաբնույթ հիմնախնդիրներին:

Ըստ զեկույցի, պետական անկախության շնորհիվ մարդու իրավունքների առաջընթացի ամենաակնառու փաստը քաղաքական իրավունքների ձեռքբերումն է (տեղեկատվության եւ խոսքի ազատության, ընտրությունների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու, միավորումներ, կուսակցություններ ստեղծելու իրավունքներ եւ այլն):

Զեկույցում կարեւորված է նաեւ այն, որ Հայաստանում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Նշված եւ էլի ուրիշ իրավունքների հետ կապված իրավիճակը հանձնաժողովը զեկույցում որակել է որպես «նվաճումներ», արձանագրելով, սակայն, որ դրանք խաթարվում են կոռուպցիայի, սպեցիալ տնտեսության, հովանավորչության, հոչակված, բայց չգործող օրենքների պատճառով:

Տարեկան զեկույցում հիշատակված բազում հիմնահարցերի կապակցությամբ արվածի ու չարվածի հետ փաստվում է, որ մարդկանց արժանավայել ապրելու նվազագույն կենսապայմանները շարունակում են մնալ անբավարար:

Ա. Հ.

«Ա1+»-ական պլակատներով դեպի նախընտրական շահաբաժիններ

Հանրահավաք, որտեղ խոսքի ազատության խնդիրը երրորդական պլանում էր

Անկախ «Ա1+»-ի կամքից, որը կտրականապես դեմ է արտահայտվել մրցույթի հետ կապված խնդիրները քաղաքականացնելուն, ընդդիմադիր դաշտի ուժերը երեկ անցկացրին նախօրոք հայտարարված բողոքի հանրահավաքը: Նախաձեռնությանը միացել էին 14 կուսակցություններ՝ ԱԺԿ, ԱԺՄ, ԱԺԴ, ԳԻԱՔՄի, ՀԴԿ, ՀԺԿ, ՀԿԿ, Հայաստանի կոմունիստների միություն, ՀՍԴԿ, «Հանրապետություն», Հայրենիք եւ պատիվ միություն, ՍԻՄ, ՍԴՀԿ, Սոցիալիստական ուժերի միություն: Ազատության հրապարակում հավաքված բազմությունը չէր գերազանցում 10000-ի ցուցանիշը, ինչը, բնականաբար, ամենահարմար լսարանն էր այս ուժերի համար խոսքի ազատության պաշտպանության խոսքի տակ նախընտրական շահաբաժիններ ստանալու համար:

Ուշադրություն դարձնենք, որ հիշատակված բոլոր ուժերն էլ որեւէ նախադահինային միությունների ներկայացուցիչներ են՝ ե՛ւ եռյակի, ե՛ւ «Սոցիալիստական Հայաստանի» եւ որ ամենաաբսուրդայինն է՝ «Սահմանադրական շարժման»: Եվ որ հաստատես այս շարժման անունից էին համապատասխան արդեն հայտնի ուժերը մասնակցում, վկայում էր դեռ երեքշաբթի օրը խորհրդարանում ՀԺԿ-ական Ստեփան Ջաֆարյանի այն հայտարարությունը, թե հանրահավաքի նախաձեռնությանը 6-յակի կուսակցություններն էլ են մասնակցել: Նման զուտ քաղաքական քայլին 6-յակի միանալն առնվազն երկու բան է նշանակում՝ սահմանադրական շարժումն արդեն սպառել է իրեն, երկրորդ՝ այդ խոքի տակ գաղափարական համարվող պայքարը բոլորովին էլ այդպիսին չէր:

Ինչեւէ, կարելի է նկատել, որ հերթական անգամ այս ուժերը սկսել են իսկապես պարել նախկինների նվագի տակ: Թեեւ նախաձեռնող կուսակցությունների շարքում բուն ՀՀՇ-ական արբանյակներից եւ ոչ մեկը չկա, այնուամենայնիվ, երկուշաբթի օրը Ա. Հովհաննիսյանը, Վիգեն Խաչատրյանը եւ մյուս ՀՀՇ-ականներն էին խորհրդարանի դարպասի մոտ հավաքված մի խումբ մարդկանց առաջնորդում դեպի Ազատության հրապարակ:

Սակայն, բնականաբար, 14 կուսակցություններից եւ ոչ մեկը չի համարձակվում բարձրաձայն ասել, որ, այո, իրենք համագործակցում են նախկինների հետ: Ավելին՝ հանրահավաքում իր ելույթի ընթացքում շեշտը հենց այս հանգամանքի վրա դնելով, ԱԺԿ ղեկավար Շավարշ Քոչարյանը նշեց, թե ինքն այն մարդը չէ, որ կարող է համագործակցել ՀՀՇ-ի հետ: Սակայն դա չէր խանգարում նույն Շավարշ Քոչարյանին հայտարարելու, որ «Ազատ խոսքը մնում էր միայն երկու հեռուստաալիքում. «Նոյյան տապան» եւ «Ա1+», որոնք ժողովրդին այլ կարծիք էին տրամադրում: Եթե դրանք էլ չկան, ստացվում է, որ ինչքան հեռուստաընկերություն կա, ինչքան ռադիո կա, բոլորը հարմարեցվելու են մեկ ստանդարտի՝ հանրային հեռուստատեսության»:

Այստեղ իսկապես տեղին է «Ա1+»-ի անունը շահարկող Շավարշ Քոչարյանին հիշեցնել, որ ինքն էր ննջասրահի որենքի նախագծի գլխադասային հանձնաժողովի նախագահը եւ ինքն էր խոսում բոլոր հեռուստաընկերություններին հավասար պայմաններով մրցույթներին մասնակցելու հնարավորություն ընձեռելու մասին:

Ի դեպ, իր խոսքում միակը հենց Շավարշ Քոչարյանն էր, որ շեշտը դրեց հենց «Ա1+»-ի վրա: Իսկ իրավապաշտպան Ավետիք Իշխանյանը, թերեւս անգիտակցաբար, հաստատեց, որ հանրահավաքի բուն նպատակը «Ա1+»-ի խնդիրը քաղաքականացնելն է: Նա իր խոսքում նշեց, որ «Ա1+»-ի գործը չէ, այլ հենց քաղաքական ուժերի գործն է հարցը բարձրացնելը եւ հեռուստաընկերության վերաբացմանը հասնելը: Կարելի էր կարծել, թե իրավապաշտպանն ավելի է շահագրգռված կոլեկտիվի հետագա աշխատանքով, քան հենց կոլեկտիվը:

Սակայն ընդհանուր նմանակումն իր ելույթով ցրեց «Հանրապետություն» կուսակցության նախագահ Ալբերտ Բազեյանը, ըստ որի իշխանություններն ամեն ինչ անում են՝ ընդդիմադիր ուժերին ամբիոններից զրկելու համար եւ մշակութային, գիտական հիմնարկներին պարտադրում իրենց չտրամադրել դահլիճները: Իշխանություններից խոսված այս գործիչը չզլացավ մեկ անգամ եւս հիշեցնել, որ նախագահը քաղաքապետարանին մեղադրում է «փողերի վրա նստած լինելու եւ կառավարության միջոցներն ուտելու» մեջ:

Ավելին, 14 կուսակցությունների՝ հանրահավաքում հրապարակած բանաձեւի մեջ հիմնական շեշտը դրվում էր հենց այս խնդրի վրա. «Հայաստանը՝ մեր երկիրը, հայտնվել է տոտալիտարիզմի հաստատման վտանգի առաջեւ: Ստեղծված իրավիճակն այլեւս անհանդուրժելի է: Այս ամենով փաստորեն վարչախումբը բացահայտում է իր սնանկությունն առաջիկա ընտրությունների նախաշեմին: Հեռուստատեսությամբ, ռադիոյով եւ թերթերի ճնշող մեծամասնությամբ իշխանություններին ոչ հաճո կարծիք հայտնելու անհնարինության պայմաններում ժողովրդի հետ շփվելու միակ հնարավորությունն անմիջական շփումներն են, հանդիպումները դահլիճներում եւ հանրահավաքներում: Իշխանություններն այստեղ էլ են փորձում խոչընդոտներ ստեղծել: Մշակույթի, գիտության նախարարությունները, գիտությունների ակադեմիան ընդունել են հակասահմանադրական որոշումներ, որոնք արգելում են իրական ընդդիմադիր ուժերին դահլիճների տրամադրումը նույնիսկ վարձակալական հիմունքներով: Խափանիչ այս գործողություններին պարտադրում են մասնակցել ուժային կառույցներին թե՛ մարզերում եւ թե՛ Երեւանում»:

Ըստ էության հանրահավաքի կազմակերպիչներից եւ ոչ մեկը հավաքված սպար բազմությանը չփորձեց ներկայացնել իրավական այն հիմքերը, որոնք թույլ չտիտ տային հեռուստաընկերության լիցենզիայից զրկումը: Ավելին՝ գրեթե ոչ մեկը նրանցից չփորձեց կարեւորել «Ա1+»-ի օրերաշիվ լրատվական բլոկի գործունեությունը, այլ շեշտը դրվում էր միայն ընդդիմությանը եթերից զրկելու իշխանության ջանքերի վրա: Հայաստանի քաղաքական դաշտի համար օբյեկտիվ լրատվությունը հենց այդպես էլ թերեւս ընկալվում է:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայ ժողովրդական կուսակցություն

Գաղափարախոսություն, ծրագիր, մարտավարություն

Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) գաղափարապես սկզբնավորվում է կովկասահայ ու ռուսահայ լիբերալիզմից, որի գլխավոր խոսափողը, իհարկե, «Մշակն» էր: Եվ պատահական չէր, որ այս կուսակցությանը երբեմն անվանում են նաեւ մշակական: ՀԺԿ-ի դավանանքը հիմնականում համընկնում ու նույնանում էր «Մշակ» թերթի արծարծած ու պաշտպանած գաղափարներին: Ազատական հոսանքը ռուսահայ իրականության մեջ սկիզբ է առել ավելի վաղ՝ տակավին 19-րդ դարի կեսերից, Ս. Նազարյանցի «Հյուսիսափայլի» ժամանակներից: Ավելացնենք նաեւ, որ ազատախոհությունը նաեւ հայ իրականության հոգեհարազատ հոսանքներից է, որից էլ հեռագայում սկիզբ առան հայ ռամկավար եւ ազատական կուսակցությունները, որոնք էլ 1921 թ. միավորվեցին ու կազմեցին Ռամկավար Ազատական կուսակցությունը:

Գրիգոր Արծրունի

ՀԺԿ-ն գաղափարական-ծրագրային նմանություն եւ ընդհանրություն ուներ 1905 թ. հոկտեմբերին հիմնված ռուսական ազատական ամենազորեղ «ժողովրդական ազատություն» կամ կոնստիտուցիոն դեմոկրատների (կադետների) կուսակցության հետ: Ուստի պատահական չէ նաեւ, որ հայ ժողովրդականներին հաճախ անվանել են հայ կադետներ: Այդպես է արվել հատկապես բոլշեւիկյան եւ խորհրդային գրականության մեջ: Խնդիրն այն էր, որ բուրժուական որակվող կուսակցությունը չէր կարելի անվանել «ժողովրդական»:

«Մշակը» եւ մշակականները դեռ ռուսական առաջին հեղափոխության ժամանակ (1905 թ. հոկտեմբերին), ռուսական նորահիմն Կադետական կուսակցության օրինակով, կուսակցություն կամ քաղաքական կազմակերպություն ստեղծելու փորձ արեցին: Կազմակերպությունը կոչվեց «Հայ դեմոկրատական կուսակցություն»: Այս առնչությամբ Դ. Անանունը տեղեկացնում է, որ 1905 թ. գլուխ բարձրացրեց Հայ սահմանադիր-ռամկավար կուսակցությունը:* Սա ռուսական կադետների կուսակցության հայկական մի խմբակցություն կամ մասնաճյուղ էր, որի մեջ ընդգրկվել էին կադետների աշխարհայացքին հարող հայ գործիչներ՝ Համբարձում Առաքելյանը, բժիշկ Ալեքսանդր Խաչիսյանը, Լեւոն Ղուլյանը, Մելիք-Ազարյանը, Սամսոն Հարությունյանը, Լեւոն Սարգսյանը, Ալեքսանդր Քալանթարը եւ ուրիշներ:

1905 թ. կազմվեց ծրագրի նախագիծ: Կուսակցությունը պիտի հետամուտ լիներ նաեւ հայությանը հուզող ազգային խնդիրներին (թուրքահայ հարցին) եւ իր կազմով լիներ ազգային: «Մշակն» այս ուղղությամբ զգալի ջանքեր թափեց: Բայց հետագայում ռուսական հետադեմ բյուրոկրատիան կանխեց Կադետական կուսակցության հայկական նմանակ «Հայ դեմոկրատական կուսակցության» կայացման փորձերը: Իսկ կուսակցության ստեղծման նախաձեռնողները չհամարձակվեցին հիմնել անլեգալ (ընդհատակյա) կուսակցություն:

Այսպիսով, մինչ 1917 թ. մարտիին Թիֆլիսում կհիմնվեր ՀԺԿ-ն, մշակական ուղղության գործիչները դեռ 1905 թ. հոկտեմբերին փորձեր են արել հիմնելու կադետական ուղղության եւ ազգային նկարագրով կուսակցություն:

Կարելի է վստահ լինել, որ Հայ ժողովրդական կուսակցությունը 1917 թ. փետրվարյան մեծ ու անարյուն հեղափոխության ծնունդն էր: Նոր կուսակցության հիմնման նպատակով ստեղծված նախաձեռնող խումբը (Հ. Առաքելյան, Մ. Բաբաջանյան, Ա. Հարությունյան, Լ. Ղուլյան, Գ. Մելիք-Ղարագյոզյան եւ ուրիշներ) մարտիի 7-ին հրապարակեց հռչակագիր, որն ուներ փաստորեն ծրագրային բովանդակություն: Ծրագրի մշակումը թողնելով ապագա համագումարին՝ այդ հռչակագրում նորածին ՀԺ կուսակցությունը ողջունում էր ռուսական մեծ եւ անարյուն հեղափոխությունը եւ իր լիակատար համակրանքն ու աջակցությունն էր հայտնում ժամանակավոր կառավարությանը: Ազգային, դասակարգային, կրոնական եւ տնտեսական խնդիրների լուծումը սրանք եւս թողնում էին Սահմանադիր ժողովի իրավասությանը: Պատերազմի եւ խաղաղության հարցում ՀԺԿ-ն պաշտպանում էր «պատերազմ, մինչեւ որ չֆանա գերմանական միլիտարիզմը», կարգախոսը: Սրանք գտնում էին, որ գերմանական միլիտարիզմի ջախջախումը խոշոր հարված կլիներ նաեւ պանթուրքիզմին: Արդյունքում հայ ժողովուրդը կարող էր ազատություն ձեռք բերել եւ հուսալ իր դատի արդարացի լուծմանը:

ՀԺԿ-ի հրապարակած հիմնադիր հռչակագրում ասվում էր, որ իր ծրագրային հիմնադրույթներով հարում է ռուսական «ժողովրդական ազատություն» կադետների կուսակցության 1917 թ. մարտի 25-ին 7-րդ համագումարում ընդունված վերջին բարեփոխված ծրագրի գաղափարներին՝ իրավական, ժողովրդավարական, պառլամենտական հանրաքվեարկության համար:

Ազգային հարցում նորահիմն ՀԺԿ-ն դարձյալ պաշտպանում էր, ռուսական համապետականության շրջանակներում, քաղաքական-տարածքային ինքնավարության եւ տեղական ինքնակառավարման պահանջը: Ժողովրդականները հատուկ ընդգծում էին Հայկական հարցի կարեւորությունը: Ընդ որում, ժողովրդականները Հայկական հարցում դրսեւորում էին տարբերակված մոտեցում: Առհասարակ Հայկական հարցը նրանք դիտում էին որպես միջազգային հարց, որը կարող էր լուծում ստանալ միջազգային կոնգրեսում: Տաճկահայ խնդրում նրանք, ընդառաջելով թուրքահայերի ցանկությանը, պահանջում էին արեւմտահայության ազատագրում թուրքական դարավոր սդրկությունից եւ ազգային-կուլտուրական անկախ զարգացում, իսկ արեւելահայ նահանգների ու գավառների համար նախատեսում էին տարածքային եւ ազգային-մշակութային ինքնավարություն՝ տեղական հարցերի վերաբերյալ օրենսդրական մարմնով: Հայկական ինքնավարության իրավասության մեջ մտնելու էին բոլոր վարչական, տնտեսական, մշակութային եւ դատական գործերը: Հայկական ինքնավարության սահմաններում գործավարության պատշաճական լեզուն համարվելու էր հայերենը: Հայկական ինքնավարության սահմաններում հարգվելու էին ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային իրավունքները: Նույն կերպ, ժողովրդականները գտնում էին, որ պետք է պաշտպանվեին արեւելահայ գավառներից դուրս Ռուսական կայսրության երկրամասերում ապրող հայերի ազգային-մշակութային ինքնավարության իրավունքները:

Եկեղեցու գործերում նորահիմն կուսակցությունը պահանջում էր վերականգնել հայոց անկախ եկեղեցու բոլոր իրավունքները, պահպանել եկեղեցական կալվածքները, գումարել ազգային-եկեղեցական ժողով՝ հոգեւորականներից: Հայոց եկեղեցու կալվածքները, որոնց եկամտով էին պահվում հայ ժողովրդի հոգեւոր եւ մշակութային հաստատությունները, կազմելու էին համազգային անկասելի սեփականություն:

ՀԺԿ-ի առաջին ծրագիրը հաստատվեց 1917 թ. սեպտեմբերին կուսակցության առաջին համագումարում: Ոմանք ՀԺԿ-ն որակելով օտարածին՝ այն նույնացրել են ռուսական կադետների կուսակցության հետ՝ համալրելով վերջինիս կովկասահայ հատվածը: Իհարկե, երբ հիմնվեց կուսակցությունը եւ ընդունվեց առաջին ծրագիրը, բավականին մեծ ընդհանրություն կար այդ երկու կուսակցությունների միջեւ, սակայն հետագայում՝ սկսած 1917 թ. վերջից ու հատկապես 1918 թ. ընթացքում Ռուսաստանում եւ Անդրկովկասում տեղի ունեցած արմատական փոփոխություններից եւ Հայաստանի անկախության հռչակումից հետո, ՀԺԿ-ն, պարելով հետագա քաղաքական էվոլյուցիա, լիովին կանգնեց ազգային հողի վրա: Այնպես որ, իրավացի չեն նրանք, ովքեր ՀԺԿ-ն նույնացնում են ռուսական կադետների կուսակցության հետ: Երկու կուսակցությունների աշխարհայացքի եւ մարտավարության ակներեւ նմանության հետ կային նաեւ ռազմավարական ակնհայտ տարբերություններ: Ռուսական կադետների եւ հայ ժողովրդականների ամենագլխավոր տարբերակիչ գիծն այն էր, որ ՀԺԿ-ն ուներ ընդգծված ազգային նկարագիր (դրոշ), իսկ կադետները, համառուսական մյուս կուսակցությունների նման, առանձնապես մեծ կարեւորություն չէին տալիս ազգային հարցին: Այսպես, 1917 թ. սեպտեմբերին ՀԺԿ-ի առաջին համագումարում խնդիր էր դրվում կուսակցությունը դարձնել անկախ եւ ազգային: Այդ համագումարում ընդունված կուսակցության առաջին ծրագրում առանձին բաժին էր կազմում ազգային հարցը: Ամրակայելով կուսակցության հիմնադիր հռչակագրի գաղափարները՝ նրանում պաշտպանվում էր Ռուսահայաստանի ազգային-տարածքային ավտոնոմիա՝ տեղական բոլոր հարցերի վերաբերյալ, ուր գործավարության պատշաճական լեզուն համարվում էր հայերենը: Այս կետը դեմ էր կադետների ծրագրին, որովհետեւ վերջիններս դեմ էին Ռուսաստանի ազգային փոքրամասնությունների ազգային-տարածքային ավտոնոմիային եւ միայն թույլատրելի էին համարում փոքրաթիվ ազգությունների կուլտուր-ազգային ինքնավարությունը: Այստեղ մենք պետք է կարողանանք զանազանել ազգային-տարածքային ինքնավարությունը կուլտուր-ազգային ինքնավարությունից: Վերջինս էքստերիտորիալ պահանջ է: Իսկ ազգային-տարածքային ինքնավարությունն այնպիսի պահանջ է, որը կարող է հիմք հանդիսանալ ազգային ինքնավարության հետագա զարգացման՝ ազգային պետականության ու անկախության գաղափարի հաղթանակին: 1918 թ. Հայաստանի անկախության հռչակումից հետո ՀԺԿ-ն հետեւողականորեն պաշտպանեց անկախ պետականության գաղափարը: Այս կուսակցության գաղափարական պլատֆորմի հիմքում դրված էր հայկական մշակույթի եւ պետականության պահպանման ու զարգացման իդեալը: Հայկական պետականությունը նրանք համարում էին միջոց հայկական մշակույթի ուրույն զարգացման համար: Իսկ 1919 թ. սեպտեմբերին Երեւանում գումարված երկրորդ համագումարում ՀԺԿ-ն հայ քաղաքական կուսակցությունների մեջ առաջիններից մեկն էր, որ պաշտպանեց միացյալ եւ անկախ Հայաստան ստեղծելու ծրագրային պահանջը:



Ստեփանոս Նազարյանց

Հայաստանի պետական կառուցվածքի հարցում ՀԺԿ-ն, ընդունելով հանդերձ նախագահական (պրեզիդենտական) ինստիտուտի անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, առաջնությունը տալիս էր ժողովրդական ներկայացուցչությանը՝ խորհրդարանին: Դա երեւում է նրանց ծրագրի հետեւյալ կետից. «Ոչ մի որոշում, կարգադրություն, հրաման, ինչ անուն էլ որ կրի եւ ումից էլ որ բխի, չի կարող օրենքի ուժ ստանալ, եթե հիմնված չէ պառլամենտի որոշման վրա»: Ասվածից երեւում է, որ ժողովրդականները կողմնակից էին խորհրդարանական կառավարման համակարգին: Նրանք կողմնակից էին ամուր իրավակարգ ունեցող պետության:

ՀԺԿ-ն հայ ժողովրդի եւ Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում, ըստ քաղաքական հանգամանքների ու իրադրության, ունեցել է ճկուն, ավելի ազատ ու շրջահայաց դիրքորոշում: Նրանք միակողմանիորեն չէին ջատագովում ռուսական կողմնորոշումը, թեեւ իրենք զուտ ռուսահայ կուսակցություն էին: «Եթե հայ ժողովրդի փրկությունը, կարդում ենք նրանց «Ժողովուրդ» պաշտոնաթերթում, պահանջ է ընդունել մի այնպիսի օրիենտացիա, որը կհակասի նույնիսկ ներկա պայմաններում Ռուսաստանի շահերին, ՀԺ կուսակցությունը դա կանի առանց վարանման»: «Մեզ համար, կարդում ենք նույն թերթի մեկ այլ խմբագրականում, այս կամ այն օրիենտացիան միայն միջոց է հայ ժողովրդի իդեալներն իրականացնելու գործում, եւ մի որեւէ ուրիշ երկիր կամ ժողովուրդ չի կարող լինել մեզ համար իդեալ»: Ժողովրդականները հանգում էին այն հետեւությանը, որ հայ ժողովուրդը պետք է ունենա միայն մի հայկական կողմնորոշում: Ինչպես տեսնում ենք, քաղաքական կողմնորոշման խնդրում էլ հայ ժողովրդականներն այնքան էլ կառչած չէին կադետներին ու Ռուսաստանին:

Ժողովրդականներն իրենց դավանանքով եւ հետաքրքրած նպատակներով ազգային էին հենց թեկուզ նրանով, որ նրանց համար գլխավորը ոչ թե դասակարգային, այլ ազգային պետական շահն էր: Կուսակցության առաջին ծրագրում որպես հիմնադրույթ ընդգծվում էր նրա ազգային եւ աղադասակարգային լինելու հանգամանքը:

Ժողովրդականներին խորթ էին հեղափոխական, սոցիալիստական գաղափարները: Որպես ազատական կուսակցություն ՀԺԿ-ն իր էությամբ աղադասակարգային էր, բայց քանի որ իր տնտեսական պլատֆորմով ընդունում էր քաղաքացու մասնավոր սեփականության իրավունքը, այստեղից էլ ինքնաբերաբար նա որակվել է որպես բուրժուական կուսակցություն: Իրականում ՀԺԿ-ն ազգային, հավասարապես բոլոր շերտերի շահերի ու իրավունքների պաշտպանության; ոչ հեղափոխական գործելակերպի, խաղաղ բարեշրջման, ամուր խորհրդարանական, իրավական, ժողովրդավարական պետության կողմնակից կուսակցություն էր:

ՀԺԿ-ն իր կազմակերպական ծեւով նույնպես ազգային էր: Համաձայն կանոնադրության, կուսակցության անդամ կարող էին լինել միայն հայերը: ՀԺԿ-ի շարքերում կային մտավորականներ, ծառայողներ, գյուղացիներ, արհեստավորներ, հոգեւորականներ եւ սոցիալական ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ:

Տալով ժողովրդական (ռամկավար) եւ ընդհանրապես «բուրժուական» որակվող ազատական կուսակցությունների ընդհանուր գնահատականը՝ կարելի է անել հետեւյալ եզրակացությունը.

ա) որպես ազգային տիպի կուսակցություն՝ ընդունում էին ազգային շահերի գերակայությունը դասակարգայինի նկատմամբ: Չէին ճանաչում որեւէ դասակարգային առանձնաշնորհում: Հանդես էին գալիս ազգային դիմագծի եւ նրա օրինական շահերի ու պատմաքաղաքական իրավունքների պաշտպանությամբ՝ միաժամանակ հարգելով մյուս ժողովուրդների իրավունքներն ու շահերը:

բ) Այս տիպի կուսակցությունների ընկերային աշխարհայացքի առանցքն անհատի բոլոր տեսակի կարողությունների (ֆիզիկական, մտավոր եւ բարոյական) ազատ դրսեւորման մեջ էր:

գ) Եվ վերջապես, նրանք կողմնակից էին քաղաքական, տնտեսական ու ընկերային բարեշրջումնային (էվոլյուցիոն) ուղուն:

ԱՐԱՐԱՏ ՎԱՐՈԲՅԱՆ

**Տես Դ. Անանուն. Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3. էջ 351: Պատմաբան Մ. Արզումանյանն այս կուսակցության հիմնադրումը թվագրել է 1906 թ., որը ճիշտ չէ (Տես Մ. Արզումանյան, Բոլշեւիկների գործունեությունը..., էջ 197):*

Միշիգանի գիտաժողովում կասկածի տակ է դրվել Հայոց ցեղասպանությունը

Սփյուռքահայ որոշ գիտնականներ նպաստել են դրան

«Ազգը» մարտի 14-ի համարում, անդրադառնալով «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովին», կարծիք էր հայտնել, որ դրա գործունեությունը վերականգնվում է: Կարծիքի համար հիմք էին ծառայել Մ. Նահանգներից ստացված տեղեկությունները, հանձնաժողովի թուրք անդամների ելույթները, թուրքական մամուլի վկայություններն ու մարտի 7-10-ը թուրք եւ սփյուռքահայ գիտնականների մասնակցությամբ Միշիգանի համալսարանի կազմակերպած գիտաժողովը:

Մարտի 15-ին «Ակօսը» ոչ միայն հաստատեց մեր կարծիքը, այլեւ հիմնավորեց հանձնաժողովի վերականգնման պայմանավորումը Միշիգանի գիտաժողովի հետ, գրելով, որ այնտեղ ընդարկվել է վերականգնման հարցը: Ընդ որում, «Ակօսը» ենթադրում էր, թե ապրիլի 1-2-ին Նյու Յորքում հանձնաժողովի անդամները կհանդիպեն:

Միշիգանի գիտաժողովում կասկածի տակ է դրվել Հայոց ցեղասպանությունը

Ըստ երեւույթին հանդիպումը հետաձգվել է: Կարեւորը, սակայն, հետաձգումը չէ, այլ՝ հանձնաժողովի ստեղծման ԱՄՆ պետդեպարտամենտի նախաձեռնությունը, Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների կարգավորմանը պատասխանող Վաշինգտոնի շահագրգռությունները, դրանց համընկնումը թուրքական շահագրգռությունների հետ, հայ-թուրքական «հաշտեցման» առաջադրանքով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցումը, առաջադրանքի կատարման պայմանավորումը հանձնաժողովի գործունեությամբ եւ վերջապես, գիտաժողովների միջոցով այդ գործունեության ոլորտի ընդլայնումն ու սփյուռքահայ որոշ գիտնականների ծառայեցումը ընդլայնման նպատակին:

Ինչպե՞ս: Հայոց ցեղասպանության հարցը վերջիններիս աջակցությամբ վիճարկման ոլորտ ներքաշելու միջոցով, որպեսզի դա Թուրքիայի արտգործնախարարության մշակած «Հայկական հարցի չեզոքացման» նախագծին համապատասխան դուրս մղվի արեւմտյան երկրների խորհրդարանների օրակարգից եւ պատմաբանների հայեցողությամբ անվերջ քննարկվի:

Հանձնաժողովը Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին հակադրելու եւ դրա գործունեության ոլորտն ընդլայնելու առումով, թերեւս, հատկանշական է Միշիգանի համալսարանի վերոհիշյալ գիտաժողովը: Դա կազմակերպվել է նույն համալսարանի պրոֆ. Ֆաթմա Մյուգե Գյոչեքի եւ Չիկագոյի համալսարանի պրոֆ. Ռոնալդ Սյունիի համատեղ ջանքերով:

Սյունիի վկայությամբ՝ գիտաժողովը հրավիրվել է «1915 թ. իրադարձությունների պատճառները բացահայտելու» առաջադրանքով, որ հնարավոր լինի թուլացնել հայերի եւ թուրքերի միջեւ առկա լարվածությունը: Գիտաժողովի մասնակիցներից Անկարայի համալսարանի պրոֆ. Բասքրն Օրանը «Ակօսի» մարտի 22-ի համարում հաստատում է Սյունիի վկայությունը: Նա, նկատի ունենալով սփյուռքահայ գիտնականներին, նշում է. «Նրանք, բացառությամբ մեկի, թուրքերին հասցեագրված մեղադրական ելույթներ չունեցան, իսկ այդ անձնավորության ելույթին (ակնարկը պրոֆ. Վահագն Տատրյանի մասին է) մյուս հայերն առանձնակի համակրանք չէին ցուցաբերում: Նույնիսկ սփյուռքի ամենաարմատականներից Ռիչարդ Հովհաննիսյանը չափազանց դրական էր տրամադրվել, եւ նա հայերին օգնության ձեռք մեկնած թուրքերի մասին զեկուցում կարդաց, ասելով. «Անընդհատ վատ բաների մասին խոսելն ինձ ձանձրացրել է: Ես իմ զեկուցման մեջ լավ բաներից եմ խոսելու»: Վերջում Օրանը եզրակացնում է. «Ըստ իս, զեկուցումներից կարեւորագույնը ՀՅ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Թուրքիայի հետ մերձեցման քաղաքականության ճարտարապետ Ժիրայր Լիպարիտյանի զեկուցումն է»:

Ինչ վերաբերում է զեկուցումների բովանդակությանը, ապա դրանց մասին պատկերացում կազմելու համար մնում է բավարարվել այն կցկտուր մեջբերումներով, որոնք տեղ են գտել գիտաժողովի աշխատանքներին Սյունիի տված ընդհանուր գնահատականում: Ի դեմ, գիտաժողովը «1915 թ. տեղահանության» հարցի հայ եւ արեւմտյան պատմագրության վերաբերյալ զեկուցումով նա է բացել:

Սյունին, «Ակօսի» նույն օրվա համարի վկայությամբ, գիտաժողովում նշել է, որ ստանդարտ բացատրությունները 1915 թ. իրադարձությունների կծիկը հանգուցալուծելու տեղ չեն թողնում, իսկ ժամանակակից պատմագրությունը, անտեսելով այն փաստը, որ երիտթուրքերն իրենք Օսմանյան կայսրության գոյությունը պահպանելուն նվիրված աշխարհիկ մոդեռնիստներ էին, փորձում է հայկական կոտորածները պայմանավորել (թուրքերի) կրոնով եւ ազգայնամոլությամբ: Այնուհետեւ նա, կատարվածի համար շարունակ թուրքերին մեղադրելիս հայերի ակտիվ դերը շրջանցելու եւ Օսմանյան Թուրքիայի պատմությունն անխուսափելիորեն վերջինի ցեղասպան հակումների վերաբերյալ հորինվածքով նույնացնելու միտումների առնչությամբ քննադատել է հայ պատմագրությանը:

Իր հերթին պրոֆ. Վահագն Տատրյանը Հայոց ցեղասպանության մեջ իսլամի դերը նվազեցնելու համար քննադատել է Սյունիին, ընդգծելով, որ մոլլաները հայերի դեմ ջիհադի կոչ էին անում: Հակառակ նրան, Սթիվեն Ատսուրյանը մատնացույց է արել այն (թուրք) մահմեդականներին, որոնք հազարավոր հայերի կյանքն էին փրկում:

Ինչ վերաբերում է պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանին, ապա նա հայ պատմաբաններին բաժանել է երկու խմբի: Ըստ նրա՝ առաջին խմբի ներկայացուցիչները Հայոց ցեղասպանության մեջ տեսնում են երկարաժամկետ թուրքական նպատակադրվածություն, իսկ երկրորդները դրա իրագործումը հանգեցնում են անբարենպաստ պայմաններին, որոնց մեջ հայտնվել էին հայերը, եւ դա դիտարկում են իբրեւ պատերազմական սպառնալիքի հետեւանք: Ցեղասպանության հարցում երկու խմբի տեսակետներն էլ համարելով մեծապես չափազանցված, Հովհաննիսյանն այնուամենայնիվ արտահայտվել է դրանց համատեղելիության օգտին եւ նշել, որ երիտթուրքերի ղեկավար կազմի մեջ, անկասկած, կային նպատակադրվածությամբ առաջնորդվողներ:

Այլ կերպ՝ Հայոց ցեղասպանությունը ծրագրված չէր: Հովհաննիսյանի այս տեսակետին, որը Ցեղասպանության թուրքական կեղծարարությունը հիմնավորելու համար ամերիկահայ պատմագրության մեջ առաջ է քաշել Սյունին, հակադրվել է Թաներ Ակչամը եւ փաստորեն հերքել, ընդգծելով, որ երիտթուրքերը 1914 թ. հունվարին ոչ մահմեդականներին Անատոլիայից ախտորելու որոշում էին կայացրել: Իսկ Ժիրայր Լիպարիտյանը եւ գիտաժողովի «1915 թ. իրադարձությունների պատճառների բացահայտման» առաջադրանքին հարգանք մնալու եւ թե՝ Հայոց ցեղասպանության հարցը վիճարկման ոլորտ ներքաշելու, ինչպես նաեւ վիճարկումների հարատեւությունն ապահովելու մղումով եզրակացրել է. «Ամեն ինչ չէ, որ գիտենք: Այդ

ՆՅՈՒ ՅՈՐՔ

ՄԱԿ-ը կրկին դատապարտեց Իսրայելի գործողությունները

Կոֆի Անան. «Ինքնապաշտպանությունը չի նշանակում ամենաթողություն»

Երկօրյա քննարկումներից հետո ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը երեկ ընդունեց թիվ 1403 բանաձեւը, որով խստիվ դատապարտվում են իսրայելական բանակի գործողությունները, կոչ է արվում անհապաղ դադարեցնել կրակը եւ ազատել պաղեստինյան գրավյալ տարածքները: Մասամբ դոնփակ անցկացված քննարկումների ավարտին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը ելույթ ունենալով մասնավորապես հայտարարեց. «Ահաբեկչությանը պատասխանելը Իսրայելին չի ազատում միջազգային օրենքի հանդեպ իր պարտավորություններից»:

Ֆրանսպրեսի թղթակիցը նշում է, որ գլխավոր քարտուղարի ելույթը սովորականից ավելի խիստ էր: Կոֆի Անանը հայտարարեց. «Արաֆաթին տարագրություն պարտադրելը կլիներ անզգուշություն եւ անչափելի սխալ հաշվարկ»:

Անվտանգության խորհրդի նոր բանաձեւում խոր մտահոգություն է արտահայտվում Մերձավոր Արեւելքում «իրադրության կտրուկ վատթարացման» կապակցությամբ եւ պահանջվում է «անհապաղ կիրառել թիվ 1402 բանաձեւը»: Անցյալ շաբաթավերջին ընդունված այդ բանաձեւով արդեն իսկ պահանջվում էր հրադադար հաստատել, ինչպես նաեւ կոչ էր արվում իսրայելական զորքերը դուրս բերել պաղեստինյան քաղաքներից, այդ թվում Ռամալլայից:

Նոր բանաձեւը կրկնում է նախորդի պահանջները, ինչպես նաեւ կոչ է անում «անմիջապես վերջ դնել բռնության բոլոր քայլերին»:

Թիվ 1403 բանաձեւը ներկայացրեց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ներկայիս նախագահ, ՌԴ դեսպան Սերգեյ Լավրովը: Ի դեմ, արաբների առաջարկած նախագծի մշակմանը մասնակցել է ԱՄՆ-ը, հրադադարին վերաբերող մասում ավելացնելով «անհապաղ» բառը: Միջազգային ԶԼՄ-ները տեղեկացնում են, որ Պաղեստինի ինքնավարության ղեկավար Յասեր Արաֆաթն անվերապահորեն համաձայնել է ընդունված բանաձեւին: Ինչ վերաբերում է Իսրայելին, ՄԱԿ-ում այդ երկրի ներկայացուցիչ Եհուդա Լանկրին ափսոսանք հայտնեց այն կապակցությամբ, որ փաստաթղթում չեն դատապարտվում անձնասպանական ահաբեկչությունները, ասելով, թե դա «վճռական հարց է քաղաքակրթության համար»: Մինչդեռ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարն իր ելույթում խոսել էր պաղեստինցիների ահաբեկչական քայլերի մասին, միաժամանակ ընդգծելով հետեւյալը. «Իսրայելն իր գործողություններն արդարացնում է իբրեւ ինքնապաշտպանություն եւ հակաահաբեկչական միջոցառումներ: Բայց պետք է պարզ լինի, որ ինքնապաշտպանությունը չի նշանակում ամենաթողություն»:

Պ. Ռ.



Քաբուլում բացահայտվել է հակապետական դավադրություն

Ամբաստանվում է նախկին վարչապետը

Աֆղանստանի իշխանությունները հայտարարել են, թե բացահայտվել է լայն դավադրություն, որի կազմակերպիչը նախկին վարչապետ եւ «Հեզբ ի Իսլամի» արմատական խմբավորման ղեկավար Գյուլբեդդին Հեքմաթիարն է: Ներքգործնախարար Յունես Քանունիի կազմակերպած մամլո ասուլիսում նշվել է, թե դավադիրները մտադրվել էին տապալել վարչապետ Համիդ Կարզայի ժամանակավոր կառավարությունը եւ Հռոմում պահանջել տարագիր նախկին թագավոր Զահիր Շահին: Ի դեմ, առաջիկա շաբաթներին սպասվում է նրա վերադարձն Աֆղանստան:

ՆԳ նախարարը հայտարարեց, թե վերջին օրերին մայրաքաղաք Քաբուլում 300 դավադիրներ են ձերբակալվել, որոնցից 160-ը դեռ կալանքի տակ են: Միաժամանակ առգրավվել են բազմաթիվ զենքեր: Դավադրության մասին իշխանություններն սկսեցին խոսել վարչապետ Կարզայի Թուրքիա մեկնելուց հետո. այդ երկիրը շուտով Քաբուլում պանձնելու է միջազգային ուժերի հրամանատարությունը:

«Հեզբ ի Իսլամի» խմբավորման խոսնակը Պակիստանից հերքել է շարժման կապը դավադիրների հետ: Մինչդեռ ՆԳ նախարար Քանունին նշել է, թե նրանք մտադրվել էին առեւանգումներ եւ ահաբեկչություններ իրականացնել վարչապետի, նախկին թագավորի, ինչպես նաեւ «օտարերկրացի հյուրերի» նկատմամբ: Քաբուլի ոստիկանապետ գեներալ Ջուրաթը նույնիսկ ընդունում է, թե Հեքմաթիարը թալիբների դաշնակիցն է եղել ընդհուպ նրանց վարչակարգի տապալումը՝ եւ «հեղաշրջում էր նախապատրաստում նրանց իշխանության վերադարձնելու նպատակով»:

Իշխանությունների պնդմամբ, իրենց հայտնի չէ Հեքմաթիարի տեղը: 1979-89 թթ. խորհրդային օկուպացման տարիներին Հեքմաթիարն աֆղանական դիմադրության հայտնի դեմքերից էր: Նրան հովանավորում էին Պակիստանի գաղտնի ծառայությունները եւ ամերիկյան ԿՀՎ-ն: «Լիբերասիոն» թերթի տվյալներով, Աֆղանստանում կոմունիստական վարչակարգի տապալումից հետո 1992 թ. ծավալված քաղաքացիական կռիվների մեջ զգալի է Հեքմաթիարի մեղքը: Այդ փուչուչ արմատականը 1996 թ. թալիբների վարչակարգի հաստատումից հետո ապաստան գտավ Իրանում, որտեղից արտաքսվեց այս տարվա փետրվարին: 60-ամյա Հեքմաթիարը չի ճանաչում Համիդ Կարզայի կառավարության օրինականությունը: Ըստ որոշ լուրերի, ներկայումս նա Աֆղանստանում է, իր զինակիցների կողմից վերահսկվող շրջաններից մեկում:

Պ. Ռ.

ԿԻՍՈ

Մերկ թագավորը

Պիեռ Պաոլո Պազոլինիին, որի ծննդյան 80-ամյակը բոլորեց մարտին, համեմատել են Վերածնության շրջանի մեծ վարպետների հետ: Բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, կինոռեժիսոր, դերասան, նկարիչ, հրապարակախոս, գիտնական: Պազոլինին այնքան բազմակողմանի էր օժտված բազմազան ձիրքերով, որ իսկապես հիշեցնում էր ոսկեդարի տիտաններին: Թվում է, թե հենց ժառանգորդի իրավունքով էլ իր «Դեկամերոն» ֆիլմում նա մարմնավորել է արդեն անհետացած այդ զարմի հսկաներից մեկին՝ նկարիչ Ջոտտոյին: Ինքը՝ Պազոլինին, 20 տարի շարունակ՝ 50-ականների կեսից մինչեւ իր ողբերգական սպանությունը 1975-ին, Իտալիայի մշակութային կյանքի կենտրոնական դեմքերից էր, երկրի «թիվ մեկ այլախոհը», կատաղի վեճերի ու դատավարությունների հերոս, ում ամեն մի ֆայլը աղմկալի արձագանք էր գտնում: Պազոլինին, ինչպես գրել է նրա արվեստի երկրպագուներից մեկը, «մերկ թագավոր» էր խարդախ դերձակների հասարակության մեջ, եւ այդ մերկությունը գիտակցված մարտահրավեր էր սրանց խարդախությանը»:

Պազոլինիի տարերքը, իրոք, մարտահրավերն էր, սերը պարադոքսների հանդեմ, ընդունված պատկերացումներին հակադրվելու կիրքը: Աննա Մանյանիի հերոսուհին «Սամա Ռոմա» ֆիլմում (1962), ըստ Պազոլինիի, դատապարտման է արժանի ոչ թե աշխարհի ամենահին արհեստով զբաղվելու, այլ որդուն վայելուչ հասարակության ոգով կրթելու ծիգերի համար, մի հասարակություն, որն իր կեղծ առատությամբ Պազոլինիին շատ ավելի անբարո էր պատկերանում, քան անառակ համարված այդ կինը: Մատթեոսի ավետարանի էկրանացման մեջ (1964) նա հրաժարվել է Սուրբ գրքի կանոնական մեկնությունից ու սրբապատկերային ավանդույթներից՝ Հիսուսի երկրային կյանքի ողիսականը պատկերելով լիովին աշխարհիկ ընկալմամբ, վավերական ոճով: Պազոլինիի խստաշունչ ֆիլմում աստվածաշնչյան պատկերները զուրկ են սրբության լուսապսակից, իսկ «հեզ սրտի, բայց ոչ հեզ մտքի տեր» Քրիստոսը անձնավորում է ընդդիմության ոգին: Մատթեոսի ավետարանի այս ընթերցումը «կրոնական մարքսիզմ» որակվեց՝ վկայելով, որ Պազոլինին փորձում է իր գիտակցության մեջ շաղկապել Մարքսին եւ Քրիստոսին: Նա իսկապես մարքսիստական ուսմունքի հետեւորդն էր, բայց իրեն համարում էր «մարքսիստ հերետիկոս», ինչը եւ լիովին հաստատեց «Մեծ ու փոքր թռչուններ» ավանգարդիստական ֆանտազիայում (1966)՝ անարխիզմի շնչով թաթախված իր դառն ու հեգնալի ֆիլմում: Այստեղ ի դեմս գաղափարախոսության դրոշակակիր... ագռավի խորագիտակ մարքսիստ - մտավորականի լրջմիտ պահվածքով եւ ճառասացի ծիրքով օժտված այդ թեւավորի, Պազոլինին նկատի է ունեցել ինքն իրեն: Իսկ սկանդալային «Թեորեմը» (1968) Մարքսին եւ Քրիստոսին արդեն համատեղել էր Ֆրեյդի հետ, Ավետման սրբազան մոտիվը վերաիմաստավորել սեքսուալ տեսանկյունից: Միլանցի խոշոր արդյունաբերողի ընտանիքը, որի բուրժուական բարեկեցությունն ավերվում է խորհրդավոր, վերերկրային այցելուի՝ հրեշտակի կերպարանք առած անդիմադրելի դեւի հայտնությամբ, Պազոլինիի համոզմամբ, դեմի անխուսափելի կործանում ընթացող արատավոր հասարակության բերգական սպանությունը 1975-ին, Իտալիայի մշակութային կյանքի կենտրոնական դեմքերից էր, երկրի «թիվ մեկ այլախոհը», կատաղի վեճերի ու դատավարությունների հերոս, ում ամեն մի ֆայլը աղմկալի արձագանք էր գտնում: Պազոլինին, ինչպես գրել է նրա արվեստի երկրպագուներից մեկը, «մերկ թագավոր» էր խարդախ դերձակների հասարակության մեջ, եւ այդ մերկությունը գիտակցված մարտահրավեր էր սրանց խարդախությանը»:

Պազոլինիի տարերքը, իրոք, մարտահրավերն էր, սերը պարադոքսների հանդեմ, ընդունված պատկերացումներին հակադրվելու կիրքը: Աննա Մանյանիի հերոսուհին «Սամա Ռոմա» ֆիլմում (1962), ըստ Պազոլինիի, դատապարտման է արժանի ոչ թե աշխարհի ամենահին արհեստով զբաղվելու, այլ որդուն վայելուչ հասարակության ոգով կրթելու ծիգերի համար, մի հասարակություն, որն իր կեղծ առատությամբ Պազոլինիին շատ ավելի անբարո էր պատկերանում, քան անառակ համարված այդ կինը: Մատթեոսի ավետարանի էկրանացման մեջ (1964) նա հրաժարվել է Սուրբ գրքի կանոնական մեկնությունից ու սրբապատկերային ավանդույթներից՝ Հիսուսի երկրային կյանքի ողիսականը պատկերելով լիովին աշխարհիկ ընկալմամբ, վավերական ոճով: Պազոլինիի խստաշունչ ֆիլմում աստվածաշնչյան պատկերները զուրկ են սրբության լուսապսակից, իսկ «հեզ սրտի, բայց ոչ հեզ մտքի տեր» Քրիստոսը անձնավորում է ընդդիմության ոգին: Մատթեոսի ավետարանի այս ընթերցումը «կրոնական մարքսիզմ» որակվեց՝ վկայելով, որ Պազոլինին փորձում է իր գիտակցության մեջ շաղկապել Մարքսին եւ Քրիստոսին: Նա իսկապես մարքսիստական ուսմունքի հետեւորդն էր, բայց իրեն համարում էր «մարքսիստ հերետիկոս», ինչը եւ լիովին հաստատեց «Մեծ ու փոքր թռչուններ» ավանգարդիստական ֆանտազիայում (1966)՝ անարխիզմի շնչով թաթախված իր դառն ու հեգնալի ֆիլմում: Այստեղ ի դեմս գաղափարախոսության դրոշակակիր... ագռավի խորագիտակ մարքսիստ - մտավորականի լրջմիտ պահվածքով եւ ճառասացի ծիրքով օժտված այդ թեւավորի, Պազոլինին նկատի է ունեցել ինքն իրեն: Իսկ սկանդալային «Թեորեմը» (1968) Մարքսին եւ Քրիստոսին արդեն համատեղել էր Ֆրեյդի հետ, Ավետման սրբազան մոտիվը վերաիմաստավորել սեքսուալ տեսանկյունից: Միլանցի խոշոր արդյունաբերողի ընտանիքը, որի բուրժուական բարեկեցությունն ավերվում է խորհրդավոր, վերերկրային այցելուի՝ հրեշտակի կերպարանք առած անդիմադրելի դեւի հայտնությամբ, Պազոլինիի համոզմամբ, դեմի անխուսափելի կործանում ընթացող արատավոր հասարակության խորհրդանիշն էր: «Սպառողական դժոխքի» քաղաքակիրթ ճահճում նա իրեն բանտարկյալ էր զգում, այն համակենտրոնացման ճամբարի գերին, որի մղձավանջը պատկերել է Սալոյի ֆաշիստական հանրապետության տարիների մասին պատմող իր «Սալո կամ Սոդոմի 120 օրը» ֆիլմում (1975)՝ ներշնչվելով մարքիզ դը Սադի «նզովյալ» վեպի պաթոլոգիկ ցնորքներից: Կեղծիքով ու սպառողական հոգեբանությամբ թունավորված արդի աշխարհում Պազոլինին օտարականի, ինչպես ամերիկացիներն են ասում, «աութսայդերի» զգացողություն ուներ: Սա սիրում էր նրան դարերի խորքում փնտրել «բնական մարդուն» եւ «անեղծ մարդկային հարաբերություններ»: Բանաստեղծական գործերից մեկում Պազոլինին իրեն համարում է «հեռավոր անցյալի ուժը, որի ավանդույթների մեջ են իր սիրո ակունքները»: Հենց այդ վաղնջական ակունքներին դառնալու փորձ էր միջնադարյան գրական կոթողների էկրանացումը, որ նա կոչել է «կյանքի եռերգություն» ընդգրկելով Բոկաչչոյի «Դեկամերոնը» (1970), Չոսերի «Քենթբերյան պատմությունները» (1971) եւ «Հազար ու մեկ գիշեր» վերնագրով հայտնի արաբական ժողովրդական հեքիաթները (1973): Բայց «կյանքի եռերգությունը» ձեռնարկելուց առաջ «բնական մարդու» որոնումները Պազոլինիին արդեն տարել էին խոր հնադար, ուր նա փորձել էր իր փնտրածը գտնել հին հունական ողբերգությունների՝ «էդիպ արքայի»

Դեկամերոն

ու «Մեդեայի» դիցաբանական սյուժեներում: «Դեկամերոնը» նկարահանվել է Նեապոլում եւ քաղաքի շրջակայքում, որովհետեւ Նեապոլը Պազոլինիին թվում էր «քաղաքակրթության հարվածներից չաղավաղված պատմության վերջին ամրոցը», որի բնակիչները «մնացել էին այնպես, ինչպես ժամանակակից աշխարհից կտրված որոշ աֆրիկյան կամ հարավամերիկյան ցեղեր»: Մինչդեռ «էդիպ արքան» էկրանավորելիս (1967) Պազոլինին լիովին աղավաղել է երեւակայությանը, կյանքի կոչել իր արխայիզմով ու հեթանոսական գեղեցկությամբ թովիչ մի աշխարհ, որն անտիկ իրականության հետ այնքան քիչ ընդհանրություն ունի, որքան Սոֆոկլեսի ողբերգությունը՝ ֆիլմի: «Մեդեան» (1969) ստեղծվել է նույն սկզբունքով: Պազոլինիի պատկերած դիցական աշխարհը, ուր խաղարկվում է ողբերգության հանրածանոթ սյուժեն՝ Ոսկե գեղմին հետամուտ արգոնավորդների պատմությունը, Մեդեայի եւ Յասոնի եղերական սիրավեպը, ֆիլմի կերպարներից մեկի՝ Կենտավրոսի պես արտասովոր հիբրիդ է: Պազոլինին միախառնել է տարբեր երկրների ու մայրցամաքների հինավուրց մշակույթները, նախնադարյան ծեսերն ու տարաշխարհիկ սովորույթները: Թե «էդիպ արքան», թե «Մեդեան», որ, իմիջիայլոց, զուգահեռներ են արթնացնում Փարաջանովի գործերի հետ, վերադարձ են համընդհանուր մշակույթի նախահիմքին, արդեն կորուսյալ արահետներին, որոնցով անցել են «մոռացված նախնիների սվերները»: Մեդեան այս նախաստեղծ, մոգական աշխարհի զավակն է: Նրա հայրենի Կոլխիդայի արտաքուս քիրս, բարբարոսական բարքերը Պազոլինին հանդիպադրել է քաղաքակիրթ Կորնթոսի հղկված, նրբակյաց վարքուբարքի հետ: Բայց ինչպես պարզվում է, այդ ամենը Կորնթոսում խաբուսիկ պատրանք է, որի տակ թաքնված են դավաճանությունը, խարդավանքն ու բռնությունը: Մեդեայի ոճիրը՝ մանկասպանությունը, բոլորովին նոր իմաստ է ստանում: Դա ոչ այնքան լքված կամ անարգված սիրուհու նենգ վրեժն է, որքան այն կնոջ հուսահատ արարքը, որն այլեւս չի կարող ապրել նվաստության, կեղծիքի ու խաբեության մեջ:

Պազոլինիի ֆիլմը, իհարկե, շատ բանով է պարտական գլխավոր դերակատարուհուն: Թեեւ Մեդեան Մարիա Կալլասի հայտնի դերերգերից մեկն էր, ողբերգակ դերասանուհու տաղանդով օժտված պրիմադոննային անստատելի էր տեսնել կինոյում: Այդպես անստատելի է եւ Պազոլինին ինքը Ջոտտոյի դերում: Ի դեմ, «Դեկամերոնի» տեսարաններից մեկում նրան ընկերակցում է մտերիմ բարեկամը՝ իտալացի նկարիչ Ջուզեպպե Չիգայնան: Հենց նա էր, որ Պազոլինիի տխուր վախճանից հետո հանդես եկավ սենսացիոն հրապարակումներով, որտեղ ջանում էր ապացուցել, որ այդ մահը ոչ թե բռնության հետեւանք էր, այլ կանխամտածված ինքնասպանություն: Պազոլինին անգթորեն սպանվեց Հռոմի մերձակայքում գտնվող ամայի մարգադաշտում գլխին հասցված մահակի հարվածներից: Չիգայնան զանազան փաստերի հիման վրա հավաստիացնում է, որ դա ուրիշի օգնությամբ ինքնասպանություն էր, որն իրականացվել է իբրեւ զոհաբերություն: Սա համապատասխանում էր Պազոլինիի ողջ կյանքի ձգտմանը՝ մարտիրոսական մահով կրկնելու Քավության սխրանքը՝ ի հաստուցումն իրեն ծնած աշխարհի մեղքերի: Պատահական չէ, հիշեցնում է Չիգայնան, որ «Ավետարան ըստ Մատթեոսի» ֆիլմում Քրիստոսին ողբացող Տիրամայր էր խաղում Պազոլինիի հարազատ մայրը: Տարիներ անց այդ տեսարանը պիտի կրկնվեր՝ արդեն իսկական ննջեցյալի ներկայությամբ: Իսկ Պազոլինիի համոզմամբ, «կյանքը կարող է մեր ինքնատահայտումը լինել լոկ մահվան շնորհիվ», որն «առանձնացնում է մեր կյանքի նշանակալից դրվագները» «անորոշ ներկան» վերածելով «հստակ անցյալի»:

Դեկամերոն

ՀԱՅՈՐԴ ՇԱԲԱԹ՝ ՀԵՌՈՒՍՏԱԷԿՐԱՆՆԵՐԻՆ

Արժե դիտել

9 ապրիլի, 24.00 Պրոմեթեւս

■ «Նրա կնոջ օրագիրը» ★: Ռեժիսոր՝ Ալեքսեյ Ուչիտել: Դերերում՝ Անդրեյ Սմիռնով, Գալինա Տյունինա, Եվգենի Միրոնով, Ռուսաստան, 2000:

Անթափույց էջեր ռուս գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Բունինի կյանքից:

10 ապրիլի, 24.00 Պրոմեթեւս

■ «Ուրիշները» ★: Ռեժիսոր՝ Ալեխանդրո Ամենաբար: Գլխավոր դերում՝ Նիկոլ Քիդման: ԱՄՆ, 2001:

Միստիկական թրիլեր, ուր ամեն ինչ պարուրված է անբացատրելի սիի զգացումով:

12 ապրիլի, 23.35 Արմենակոբ

■ «Բարի Լինդոն» ★★: Ռեժիսոր՝ Սթենլի Կուբրիկ: Դերերում՝ Ռայան Օ'Նիլ, Մարիզա Բերենսոն: Մեծ Բրիտանիա, 1975:

Ուիլյամ Թեքերեյի համանուն վեպի նկարագրող, սառնաշունչ էկրանացումը, որտեղ շեշտվում է այն միտքը, որ ժամանակն ու մահը զորեղ են կյանքից:

12 ապրիլի, 01.05 ՊՐՏ

■ «Խենք Մախը» ★★: Ռեժիսոր՝ Ջորջ Միլեր: Դերերում՝ Մել Գիբսոն, Ջոն Սեմյուել, Հյու Քիս-Բըրն: Ավստրալիա, 1979:

Հրավառության չափ գունեղ այս ֆուտուրիստական մարտաֆիլմն անցել է ժանրի դասական նմուշների կարգը:

21 ապրիլի, 01.35 ՕՐՏ

■ «Սոլյարիս» ★★★: Ռեժիսոր՝ Անդրեյ Տարկովսկի: Դերերում՝ Դոնատաս Բանիոնիս, Նատալյա Բոնդարչուկ, Անատոլի Սոլոնիցին, Յուրի Յարվետ: ԽՍՀՄ, 1973:

Լեհ ֆանտաստ Ստանիսլավ Լեմի վեպի էկրանացման մեջ երկրաբնակները հայտնվում են մի մոլորակում, ուր նյութականանում են նրանց ենթագիտակցական իղձերը:

13 ապրիլի, 01.30 ՀՏԲ

■ «Կանանց քաղաքը» ★★: Ռեժիսոր՝ Ֆեդերիկո Ֆելլինի: Դերերում՝ Մարչելլո Մաստրոյաննի, Էտտորե Մանի, Բերնիս Ստեգերս: Իտալիա-Ֆրանսիա, 1980:

Ֆելլինիական ցնորատեսությամբ ու երգիծանքով դրոշմված ֆանտազիա ֆեմինիզմի թեմայով:

14 ապրիլի, 23.10 Հ1

■ «Ֆրանկենշտեյն» ★: Ռեժիսոր՝ Քենեթ Բրանա: Դերերում՝ Քենեթ Բրանա, Ռոբերտ Դե Նիրո, Հելենա Բոնեմ Քարթեր: Մեծ Բրիտանիա-Ճապոնիա-ԱՄՆ, 1994:

Մերի Շելլիի նշանավոր ֆանտաստիկ վեպի կինոտարբերակը:

14 ապրիլի, 24.00 Արմենակոբ

■ «Սիրո տրամադրություն» ★★★: Ռեժիսոր՝ Վոնգ Կար-Վայ: Դերերում՝ Թոնի Լեյուն, Մեգի Չեյուն: Հոնկոնգ-Ֆրանսիա, 2000:

Այս տխուր ու նրբագեղ մելոդրամն ըստ արժանվույն ռեկորդային թվով մրցանակներ է շահել:

ՌԵՊԼԻԿՆԵՐ

■ **Ֆրենսիս Մակդորմանդ.** «Կինը կին չէ, եթե իր պատմությունը չունի: Իմ պատմությունը միգուցե այնքան էլ հետաքրքրական չէ, բայց գոյություն ունի»:

■ **Ջինա Լոլոբրիջիդա.** «Կնոջն ընդհանրապես չպետք է մտահոգի անցնող ժամանակը: Նրա իսկական տարիքը սրտի տարիքն է»:

■ **Ֆանի Արդան.** «Պատրաստ եմ սախոս կանանց: Ինքս էլ եմ սուտ: Դա պատշաճվելու ձեւ է»:

■ **Ֆեդերիկո Ֆելլինի.** «Կանայք ամեն ինչ են՝ գաղտնիք, առասպել, անկրկնելի թովչանք, իմացության տենչ, հայացք, որի օգնությամբ պիտի փորձես ինքդ քեզ հասկանալ: Եվ ես այն տպավորությունն ունեմ, թե կինն ելա՝ լույսի ու խավարի իր հերթագայությամբ, հայտնվող ու անհետացող պատկերներով, հենց կին է, որ կա»:

Խավարի իշխանը.

Մաս երրորդ

Գրագետ

Ֆրենսիս Ֆորդ Կոպոլան խոստովանել է, թե առանձնակի սերունի բանաստեղծական գործերի հանդեմ եւ պատանեկության տարիներին երազել է Թենեսի Ուիլյամս դառնալ, նմանվել սիրած գրողին: Կոպոլայի վրա, իր խոսքերով, այդ տարիներին մեծ տպավորություն են գործել Թոմաս Մանի «Կախարդական լեռը» վեպի վերջաբանն ու հատկապես այն տողերը, թե սերն ավելի զորեղ է, քան մահը:

Դրակուլայի լեգենդը 1992-ին նկարահանած իր ֆիլմում նա մեկնաբանել է այս բանալիով եւ հավատացած է, որ հարազատ է մնացել գրական սկզբնաղբյուրին՝ ի տարբերություն մյուս էկրանավորումների ու բեմականացումների հեղինակների: Ճիշտ է, ֆիլմի ամբողջական վերնագիրը՝ «Բրեմ Սթոքերի Դրակուլան», շեշտում է այդ հավատարմությունը գրքին, բայց սա չի նշանակում, թե Կոպոլան տառակերի պես կառչել է բնագրից: Վեպն ու հեղինակի անձը յուրօրինակ մտահղացումներ են ներշնչել նրան:

«Հետաքրքրական է իմանալ, որ Բրեմ Սթոքերը վախճանվել է սիֆիլիսից, ասում է Կոպոլան: Քանի որ վեներական հիվանդությունները, ըստ էության, սիրո հիվանդություններ են, ես փորձել եմ օգտագործել այդ կապը: «Դրակուլան» սիրո պատմություն է, որտեղ կրքի խորհրդանիշը արյունն է: Այդ կիրքն անցնում է ամբողջ ֆիլմով, ինչպես ադրյան գեն»:

Կոպոլայի ընկալմամբ, Դրակուլան անկյալ հրեշտակ է, յուրատեսակ Լուցիֆեր՝ պարուրված էրոտիզմի քանձր շղարշով եւ «շրջապատված երիտասարդներով, որովհետեւ նրանց երակներում է հոսում այն կարմիր, եռացող արյունը, որը հագուրդ է տալիս սիրատոչոր վամպիրի էրոտիզմին»: «Ես ուզում էի, որ իմ ֆիլմը նման լինի էրոտիկ ցնորքի», խոստովանել է Կոպոլան:

Այդ անրջալի մթնոլորտով համակվելու համար նա բազմաթիվ հին ժապավեններ է նայել, ինչպես Ֆրիդրիխ Մուռնաուի «Արշալույսը», ժան Կոկտոյի «Գեղեցկուհին եւ հրեշը»: Որոշ տեսարաններ նկարահանվել են «Պատե» մակնիշի հին կինոխցիկով եւ վաղուց արդեն չօգտագործվող տեխնիկական միջոցներով: Կոպոլան խուսափել է ժամանակակից հատուկ էֆեկտներից, բնանկարահանումներին գերադասել ստուդիական դեկորները: Նրբաճոճ ու զգայական այս ոճավորման շնորհիվ ֆիլմը նմանվել է հինավուրց որմնանկարի, որի գունագեղ փայլից ցլացած՝ Ամերիկյան կինոակադեմիան 1993-ին երեք «Օսկար» է շնորհել «Դրակուլային»՝ հնչյունային ձեւավորման, գրիմի եւ զգեստների համար:

Կոպոլան, իհարկե, ավելին էր ակնկալում, բայց նրա սպասելիքները չարդարացան:

Էջը պատրաստեց
ՀԱՎԵՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

Մարզական

1954 Թ. ՇՎԵՅՑԱՐԻԱ

Գերմանական ֆուտբոլի առաջին հաջողությունը

Սկիզբը՝ թիվ 62 համարում

Սպասելիքները չիրականացան

Կիսաեզրափակիչ հանդիպումները տարբեր կերպ ընթացան: Եթե գերմանացիները խոշոր հաշվով հետ հաղթանակ տոնեցին ավստրիացիների նկատմամբ, ապա Ուրուգվայի եւ Հունգարիայի հավաքականների մրցախաղում պահանջվեց լրացուցիչ ժամանակ: Ավստրիացիների հետ խաղում իրեն գերազանց դրսեւորեց Ֆրից Վալտերը, որը խփեց 2 գնդակ եւ գոլային չորս փոխանցում կատարեց: Պարտության հիմնական մեղավորներ ճանաչվեցին դարպասապահ Զեմանը եւ պաշտպան Խաղելը, որոնք չմասնակցեցին 3-րդ տեղի համար կայացած խաղին:

Հունգարիայի եւ Ուրուգվայի հավաքականների մրցավեճը մասնագետներն անվանեցին եզրափակիչին արժանի խաղ: Աշխարհի չեմպիոնների կազմում բացակայում էին առանցքային 3 ֆուտբոլիստներ՝ Վարելան, Միգեսը եւ Աբոնին: 13-րդ րոպեին հաշիվը բացեց Ցիբորը, իսկ ընդմիջումից անմիջապես հետո Խիդեգկուտին երկրորդ գնդակն ուղարկեց ուրուգվայցիների դարպասը: Սակայն աշխարհի չեմպիոններին հաջողվեց վերջին 15 րոպեներին հավասարեցնել հաշիվը շնորհիվ Խոխբերգի դիպուկ հարվածների: Հունգարացիներին այս անգամ էլ օգնության եկավ թիմի ռմբարկու Կոչիշը՝ գլխի հարվածներով երկու գնդակ խփելով (4:2): Ուրուգվայցիներն աշխարհի առաջնություններում առաջին պարտությունը կրեցին, իսկ 3 որ անց պարտվեցին նաեւ ավստրիացիներին՝ նրանց զիջելով բրոնզե մեդալները:

Եվ այսպես, հուլիսի 3-ին Բեռնում Հունգարիայի եւ Գերմանիայի հավաքականները պետք է վիճարկեին աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Մասնագետների մեծամասնությունը նախապատվությունը տալիս էր հունգարացիներին, որոնք առաջին 8 րոպեների ընթացքում երկու անգամ հասան հաջողության: 6-րդ րոպեին հաշիվը բացեց Պուշկաշը, երկու րոպե անց այլի ընկավ Ցիբորը: Թվում էր, թե ինչպես խմբային մրցաշարում, այս անգամ էլ հունգարները հեշտությամբ կհաղթեն գերմանացիներին: Սակայն վերջիններս ետ շուտ հավասարեցրին հաշիվը: Եթե նախորդ հանդիպումներում հունգարները նման դեպքերում բեկում էին մտցրել մրցակցությունում եւ ի վերջո հաղթել էին, ապա այս անգամ դա նրանց չհաջողվեց: Մարզական բախտն էլ կարծես երես էր թեքել Հունգարիայի հավակնորդներից: Երկու անգամ Ցիբորի հարվածներից հետո գնդակը դիպավ դարպասածողին, Պուշկաշի խփած գոլն էլ չհաշվեց մրցավարը: Իսկ ահա գերմանացիները հաջողակ գտնվեցին: Հակագրոհներից մեկի ժամանակ 84-րդ րոպեին Ռանը խփեց հաղթական գնդակը: Ինչպես եւ չորս տարի առաջ Բրազիլիայում, այս անգամ էլ առաջնության նման ելքը շատերի համար անակնկալ էր: Առաջնության արդյունքներին վերաբերող ՖԻՖԱ-ի հատուկ ամփոփագրում նշվում էր, որ չնայած ԳՖՀ-ի հավաքականի արժանի հաղթանակին, Հունգարիայի ընտրանին, անտարակույս, լավագույնն էր առաջնությունում: Դրա վկայությունն էր նաեւ այն, որ խորհրդանշական հավաքականում միայն գերմանացի 2 ֆուտբոլիստ էր ընդգրկվել, մինչդեռ հունգարների թիվը եռակի անգամ գերազանցում էր: Հավաքականի անհաջողությունում թիմի երկրպագուները մեղադրում էին գլխավոր մարզիչ Գուստավ Շեբեշին: Նրա հիմնական սխալը համարում էին այն, որ նա եզրափակիչում դաշտ դուրս բերեց վնասվածքից չառաջինված Պուշկաշին, որը չկարողացավ լրիվ ծանրաբեռնվածությամբ գործել, թեեւ դարձավ գոլի հեղինակ: Տարիներ անց Շեբեշն անդրադառնալով անհաջողության պատճառներին, գրել է. «Հավաքականի անհաջողության հիմնական պատճառը համարում էին կազմի սխալ ընտրությունը: Սակայն կարո՞ղ է արդյոք թույլ կազմ ունեցող թիմը 90 րոպեում խփել 2 գոլ, ստեղծել գոլային 13 ռեալ պահ: Իհարկե, ո՛չ: Մեր հարձակողական եռյակը կազմում էին հրաշալի հատկանիշներով օժտված ֆուտբոլիստները: Այդ եռյակից ամենաակտիվը Պուշկաշն էր, որը բոլորից հաճախ էր հարվածում դարպասին: Պատահական չէ, որ նա 2 գոլ խփեց, որից մեկը չհաշվեց մրցավարը: Ֆուտբոլիստների ընդհանուր հոգեկան վիճակի վրա ազդեց պատասխանատվության այն մեծ բեռը, որ ընկել էր նրանց ուսերին եզրափակիչ խաղից առաջ, եւ հոգնածությունը, որ կուտակվել էր խաղից խաղ: Հավաքականը, որն ամենալարված խաղերում կարողացավ պահպանել սառնարյունությունը, մարտունակությունը եւ դրանց շնորհիվ հաղթեց, այս անգամ հոգեբանորեն չդիմացավ: Տրանով կարելի է բացատրել գոլային բազմաթիվ չիրագործված պահերի առկայությունը...»:

Շվեյցարիայում գերմանական ֆուտբոլն առաջին լուրջ հաջողությանը հասավ, որում մեծ էր հավաքականի գլխավոր մարզիչ Յոզեֆ Հերբերգերի դերը: Նա թիմը գլխավորում էր 1936 թ.: Գերմանացիների կազմում ոսկե մեդալների արժանացան Տուրեկը, Պոսիպալը, Կոլմայերը, Էկկելը, Լիբրիխը, Մայը, Ռանը, Մոլոկը, Օ. Վալտերը, Ֆ. Վալտերը եւ Շեֆերը:

Աշխարհի 5-րդ առաջնությունն այլի ընկավ չափազանց բարձր արդյունավետությամբ. 26 հանդիպումներում խփվեց 140 գնդակ, միջինը մեկ խաղում՝ 5,38 գոլ: Առաջնության լավագույն ռմբարկուի ցուցանիշն էլ ռեկորդային էր: Հունգարիայի հավաքականի հարձակվող Շանդոր Կոչիշը 5 խաղում խփեց 11 գնդակ: Նույնիսկ այն ժամանակվա բաց ֆուտբոլի պայմաններում դա արտասովոր բարձր ցուցանիշ էր: Կոչիշը հիանալի էր տիրապետում գլխով խաղին: Նա կարողանում էր պահն առագորեն գնահատել, մրցակցի պաշտպաններից ավելի բարձր ցատկել եւ գլխի դիպուկ հարվածով գրավել դարպասը: Նա Պուշկաշի հետ միասին հավաքականի գլխավոր հարվածային ուժն էր:

Դրվագ եզրափակիչ խաղից. գերմանացի Ռանի հաղթական գնդակը:

ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ

ԳՖՀ - Ավստրիա՝ 6:1 (1:0)
Օ. Վալտեր (2), Ֆ. Վալտեր (2), Շեֆեր, Մոլոկ, Պոբսա
Հունգարիա - Ուրուգվայ՝ 4:2 (1:0, 2:2)
Կոչիշ (2), Խիդեգկուտի, Ցիբոր, Խոխբերգ (2)

ՀԱՆԴԻՊՈՒՄ 3-ՐԴ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Ավստրիա - Ուրուգվայ՝ 3:1 (1:1)
Օգվիրկ, Շտոյասոպալ, Կրուս (սեփ. դարպ.), Խոխբերգ

ԵԶՐԱՓԱԿԻՉ

ԳՖՀ - Հունգարիա՝ 3:2 (2:2)
Բեռն, 3-ը հուլիսի, մրցավար՝ Բիլ Լինգ (Անգլիա)
ԳՖՀ- Տուրեկ, Պոսիպալ, Կոլմայեր, Էկկել, Լիբրիխ, Մայ, Ռան, Մոլոկ, Օ. Վալտեր, Ֆ. Վալտեր, Շեֆեր:
Հունգարիա- Գրոշիչ, Բուզանսկի, Լանտոս, Բոժիկ, Լորանտ, Զաֆարիաս, Ցիբոր, Կոչիշ, Խիդեգկուտի, Պուշկաշ, Տոտ:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՌՄԲԱՐԿՈՒՆԵՐԸ

Կոչիշ	Հունգարիա	11
Պոբսա	Ավստրիա	6
Մոլոկ	ԳՖՀ	6
Հյուգի	Շվեյցարիա	6

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ

Գրոշիչ (Հունգարիա), Սանտամարիա (Ուրուգվայ), Լիբրիխ (ԳՖՀ), Վարելա (Ուրուգվայ), Անդրադե (Ուրուգվայ), Ռան (ԳՖՀ), Բոժիկ, Կոչիշ, Խիդեգկուտի, Պուշկաշ, Ցիբոր (բոլորն էլ՝ Հունգարիա):

Պատիժներ կարգազանցներին

Աթենքի հատուկ մարզական դատարանի որոշմամբ պատժամիջոցներ կկիրառվեն «Պանաթինայիկոս»-«Օլիմպիակոս» խաղից հետո ծեծկռտուքի մասնակիցների նկատմամբ: «Պանաթինայիկոսը» սեփական հարկի տակ կայանալիք առաջիկա չորս խաղերը կանցկացնի առանց հանդիսականների, ինչպես նաեւ 87 հազար եվրո տուգանք պետք է մուծի: Ցավարին ծեծելու համար ակումբի նախագահ Անգելոս Ֆիլիպիդիսը 1 տարով զրկվել է իր պարտականությունները կատարելու իրավունքից: Նրան 1,5 տարի արգելել են հաճախել մարզադաշտ: Թիմի գլխավոր մարզիչ Սերխիո Մարգարյանը մրցավարին հայհոյելու համար 40 օրով զրկվել է իր սաների գործողություններն ղեկավարելուց: Նրա օգնականները եւս պատժամիջոցների են ենթարկվել:

«Օլիմպիակոսը» տուգանվել է 33 հազար եվրոյով: Գլխավոր մարզչի օգնական Տասոս Միտրոպուլոսը կոչվին մասնակցելու համար 6 ամսով որակազրկվել է: Միեւնույն ժամանակ հետաքննություն է սկսվել խաղի մրցավարներին կաշառելու փաստի առնչությամբ:

Պրոկոպենկոն փոխարինեց Նովիկովին

ՌԴ առաջնության եւ գավաթի մրցաշարում անհաջող մեկնարկից հետո Մոսկվայի «Դինամոյի» գլխավոր մարզիչ Ալեքսանդր Նովիկովը հրաժարական տվեց: Այդ պաշտոնում նրան փոխարինեց Վիկտոր Պրոկոպենկոն, որը 3 տարվա պայմանագիր է կնքել ակումբի հետ: Մինչ այդ, Պրոկոպենկոն զբաղեցնում էր «Շախտյորի» փոխնախագահի պաշտոնը: Նա ՌԴ առաջնություններում «Դինամոյի» թվով 7-րդ գլխավոր մարզիչն է:

ՈՒԵՖԱ - Ի ԳԱՎԱԹ

Իտալացիները հուսախաբ եղան

Կայացան ՈՒԵՖԱ-ի գավաթի կիսաեզրափակիչ առաջին հանդիպումները: Ամենայն հավանականությամբ ֆուտբոլասերներն ականատես չեն լինի իտալական երկու թիմերի եզրափակիչ հանդիպմանը: Եվ դրա հիմնական մեղավորը «Միլանն» է, որը Դորտմունդում խոշոր 0-4 հաշվով պարտվեց «Բորուսիային»: Այդ խաղի ելքը փաստորեն վճռվեց առաջին խաղակեսում, երբ բրազիլացի Ամորուզոն 3 անգամ գրավեց մրցակցի դարպասը: Հենց խաղասկզբից «Բորուսիան» դիմեց բուռն գրոհների, եւ արդեն 8-րդ րոպեին Ամորուզոն 11 մ հարվածով բացեց հաշիվը: 34-րդ րոպեին բրազիլացի ֆուտբոլիստն այլի ընկավ տեխնիկական վարպետությամբ եւ 2-րդ գնդակը խփեց: Իսկ 5 րոպե անց նա գլխի հարվածով 3-րդ անգամ ստիպեց «Միլանին» խաղը սկսել դաշտի կենտրոնից: Ընդմիջումից հետո Հայնրիխը խփեց 4-րդ գոլը:

Իտալական «Ինտերն» էլ անհաջողության մատնվեց: Սեփական հարկի տակ դաշտի տերերը 0-1 հաշվով զիջեցին «Ֆենոորդին»՝ հարցականի տակ դնելով եզրափակիչին թիմի մասնակցությունը: Խաղի ելքը վճռեց կոլումբիացի Իվան Կորդոբայի սեփական դարպասը խփած գնդակը: «Ինտերին» ոչնչով չկարողացավ օգնել նաեւ 2-րդ խաղակեսին դաշտ դուրս եկած Ռոնալդոն:

ՇԱԽՄԱՏ

Կարպովը վրեժխնդիր եղավ

Դուբայում ընթացող շախմատի Գրան պրիի խաղարկության 1/8 եզրափակիչում ուշադրության կենտրոնում էր աշխարհի չեմպիոնուհի Չժու Չենի եւ Անատոլի Կարպովի մրցամարտը: Չին շախմատիստուհին, որը նախորդ փուլում հաղթել էր աշխարհի չեմպիոն Ռուսլան Պոնոմարյովին, երկու պարտիաներում էլ զիջեց Կարպովին եւ դուրս մնաց 1-8-րդ տեղերի համար մղվող պայքարից: Երկու պարտիայից բաղկացած մրցախաղերում Լեկոն հաղթեց Լոթյեին (1,5-0,5), Թոփալովը՝ Խալիֆմանին (1,5-0,5), Բաֆրոն Իվանչուկին (1,5-0,5): Քառորդ եզրափակիչի մյուս մասնակիցներին որոշելու համար հարկ եղավ անցկացնել լրացուցիչ մրցախաղ: Միեւնույն 3-1 հաշիվը գրանցվեց Գեորգիեւ-Դրեեւ, Գրիշչուկ-Ռաջաբով, Շիրով-Շորթ պարտիաներում: Ազմայփարաշվիլին Անանդին հաղթեց 2,5-1,5 հաշվով:

Այսպիսով, քառորդ եզրափակիչում կմրցեն հետեւյալ զույգերը՝ Կարպով-Գեորգիեւ, Լեկո-Թոփալով, Գրիշչուկ-Բաֆրո, Շիրով-Ազմայփարաշվիլի:

ԳԱՎԱԹԱՅԻՆ ԵՌՈՒՇԵՌ

Հաղթողները որոշվել էին առաջին խաղերում

Այսօր եւ վաղը կկայանան ֆուտբոլի ՀՀ գավաթի 1/8 եզրափակիչի պատասխան հանդիպումները: Հիշեցնենք, որ առաջինը քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճեց «Բանանցը» երկու խաղերի արդյունքով առավելության հասնելով «Ղարաբաղի» նկատմամբ (3-0, 1-1): Պատասխան խաղերից առաջ կարելի է վստահորեն նշել, որ հաջորդ փուլ դուրս կգան «Փյունիկը», «Միկան», «Շիրակը», «Արարատը», «Սպարտակը», «Զվարթնոցը»: Թերեւս հարցականի տակ է 8-րդ զույգի հաղթողի հարցը: Առաջին խաղում «Դինամո-2000»-ը 2-0 հաշվով հաղթել էր «Կոտայքին»:

Այսօր «Նաիրի» մարզադաշտում «Փյունիկը» կհյուրընկալի «Դինամոյին»: Արմավիրում կմրցեն «Միկան» եւ «Լոռին», իսկ «Շիրակի» եւ «Լոկոմոտիվի» մրցավեճը կկայանա Աշտարակում: Վաղը Աբովյանում «Արարատը» կհյուրընկալի «Սպարտակ-2»-ին: Արմավիրում կմրցեն տեղի համանուն թիմն ու «Սպարտակը»: Աշտարակում «Կոտայքի» հյուրը կլինի «Դինամոն», իսկ «Փյունիկ-2»-ն ու «Զվարթնոցը» պատասխան հանդիպումն էլ կանցկացնեն «Նաիրի» մարզադաշտում: Բոլոր հանդիպումները կսկսվեն ժամը 16-ին:

Լավագույն քառյակը որոշվեց

